

Հ  
645

Հրատարակ. Ա. Մալխասեանցի

# ՀԱՅՈՆ ՓԱՇԱՅԻ

ՀԵՔԵԱԹԸ

(ՔԵՕՐԴԱԼՈՒ ՀԵՔԵԱԹՆԵՐԻՑ  
Մ Է Կ Պ)

Փոխադրեց Տաճկերէնից

ՍՈՒՔԻԱՆ ԶԱՀԻԿԻ ԶԱՀԻ (ԽԱՅԱՄ)



Ա Կ Բ Գ Ս Ա Ն Դ Ր Ա Գ Ո Ւ

ՏՊԱՐԱՆ Ա. Մ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑԻ

1910

2  
646

Հրատարակ. Ա. Մալխասեանցի

# ՀԱՍՏԱ ՓԱՃԱՅԻ ՀԵՔԵԱԹԵՐԻՑ

(ՔԵՕՌ-ՕՂԼՈՒԻ ՀԵՔԵԱԹՆԵՐԻՑ  
Մ Է Կ Պ)

Փոխադրեց Տաճկերէնից  
ՍՈՒՔԻԱՍ ԶԱՀՐԻԵԱՆ (ԽԱՅԱԹ)



Ա Լ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ա Պ Ո Ւ  
ՏԳԱՐԱՆ Ա. Մ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑԻ  
1910

## ՀԱՍԱՆ ՓԱՇԱՅԻ ՀԵՔԵԱԹԸ

Իւր ժամանակին հոչակաւոր Քեօռօղլին բնակւում էր Չարտախլի Զամլիքէլում իրայ քաջերով, որոնք ըստ աւանդութեան թուով 7000—էին հասնում: Այդ քաջերի թւումն էր նաև Ալվազ խանը:

Այդ ժամանակին Սիլիստրա կոչուած քաղաքում կար Հասան փաշա անունով, յայտնի կարողութեան տէր մի կառավարիչ, որը թէ փառասէր և թէ զուարձասէր մի անձնաւորութիւն էր:

Մի օր Հացկերոյթի ժամանակ, երբ Հասան փաշան շըրջապատուած էր իր բարեկամներով ու ազգականներով, առարկայ բաց եղաւ մարդկանց ունեցած կեանքի, կարողութեան և կենցաղավարութեան վերայ: Այդ միջոցին Հասան փաշայի բարեկամներից մէկը նկատեց որ, եթէ Հասան փաշան Քեօռօղլու յայտնի համբաւ վայելող Ղըռաթն էլ օր և է կերպով կարողանայ ձեռք բերել, այն ժամանակ այլ ևս ոչ մի պակասութիւն չի մնայ: Հասան փաշայի թէ կարողութեանը և թէ անուանը, Համբարեա ինքը միակը կը լինի աշխարհում, ամեն կերպ բարեմասնութիւններով օժտուած:

Հասան փաշան թէսլէտելսելէր Քեօռօղլու Ղըռաթի մասին, բայց երբէք չէր մտածել, որ իրայ կարողութեան պակասորդը լրացնողը Ղըռաթը պէտքէ լինի: Փաշան երբ լսեց այդ անսպասելի լուրը՝ զարմացաւ, կարծես թէ այդ բոպէին նա մոռացաւ իւր առջև դրուած սեղանի ճոխութիւնը և շրջապա-



8/2-61

տողների փաղաքշանքները. որովհետև այդ լուրը հետաքրքրեց նրան: Նա անվերջ մտածմունքով հարցնում էր սրան նրան և յատկապէս ուզում էր մի առ մի լսել և գիտենալ Ղըռաթի ունեցած առաւելութիւնները: Բայց որքան լսում էր՝ այնքան սիրահարվում ու յափշտակվում էր Ղըռաթի վերաբերեալ պատմութիւններով:

Լուլով մանրամասն խօսակցութիւնը, կարծես ըոպէաբար փոխուեց և մտքով սլացաւ Զամլիբէլ Ղըռաթի մօտ: Նրա խելքն ու միտքը կաշկանդուեց երեակայական ցնորքներով. իբր թէ տեսնում էր Ղըռաթին հրաշալի կերպով իւր առջեւ կանգնած ոտքերը գոփելիս: Այնուհետև նա այլ ևս չը կարողացաւ գիմանալ, անմիջապէս հրամայեց մունետիկի ձեռքով յայտարարել թէ՝ „ով որ կարողացաւ Զարդախլի Զամլիբէլից Քեռուօղու Ղըռաթը բերել Հասան փաշալի համար, փաշան խօստանում է նրան իւր Թելի խանում քոյլը կնութեան տալ հարուստ օժիտով ու մեծ գումարով“:

Այդ ժամանակ մի պարտիզապանի աշակերտ Համզա անունով, որին մականուն էին տալիս Քեալ-օղլան, մի կողով կանանչի էր բերել քաղաք ծախելու: Երբ լսեց մունետիկի տուած յայտարարութիւնը և միանգամայն յափշտակուելով Հասան փաշալի տուած խօստումներով՝ թողեց իւր կողովն ու կանանչին բժնորովին անտէր անտիրական, մօտեցաւ մունետիկին և ասաց. — «Սիրելիս, ձեր յայտարարած պահանջը ես կարող եմ կատարել, եթէ դուք յանձնառնէք ինձ ներկալացնել փաշալին»: — «Ամենայն ուրախութեամբ, պատասխանեց մունետիկը, ուրեմն Հետեւիր ինձ»: Այս ասելով՝ մունետիկը Քեալ-օղլանի հետ միասին աճապարեցին Հասան փաշալի բնակարանը, ուր տակաւին երեակայութեան մէջ տարուքում էր փաշան և համարեա զառանցում թէ՝ «կայ արդեօք աշխարհում մի անձնուրաց մարդ, որ յանձն առնի մոնել Զամլիբէլ այն արիւնարբու խմբի մէջ, և կարողանալ

աջողացնել, որ թէ ինքը ողջ մնայ և թէ Ղըռաթը մի կերպ դուրս բերէ այնտեղից և անվտանգ հասցնէ ինձ, այն էլ Քեռուօղու Ղըռաթը... Ոչ, ոչ, չէ կարելի, որովհետև այդպիով յանդուգն քայլ հրէշներն անգամ հազիւ թէ կարող են անել և վստահիլ յանձն առնել կատարելու, ուր մնաց որ թուլամորթ մահկանացուներից մէկը վստահի այդ քայլն անել...»: Հասան փաշան երբ ալսպիսի դառն մտքերով պաշարուած մերթ զառանցում էր և մերթ սթափուելով ծխում ծխամորճը, յանկարծ դուռը ճռնչալով բացուեց: Ներս մտնողը մունետիկն էր, որը արժանավայել թամաննա անելուց յետով, Քեալ-օղլանի հետ միասին կանգնեցին գուանետեւ:

Հասան փաշան որ թախիծը երեսին և ձեռը ճակտոին դրած նստել էր, գլուխը բարձրացրուց և աչքերը սկեռնելով եկուորների վերալ, ճանաչեց որ եկողը մունետիկն էր, բայց թէ ով էր հետի եկող օտարականը՝ նրա մասին ոչինչ չը գիտէր:

— «Նը, ինչ ունիս մունետիկ, ասա շուտով»:

Մունետիկը կրկին խոնարհեց գլուխը, և ուրախ ժպտով ասաց. — «Զերդ զերազանցութիւն, այս երիտասարդը յանձնառու է լինում ձեր վսեմութեան բարձր հրամանը ճշտիւ կատարելու, եթէ միայն դուք բարեհաճիք»:

Փաշան մի զննողական հայետք ձգելով օտարականի վերալ, մեղմօրէն հարցուց. — «Զաւակս, ինչպէս է ձեր անունը»:

— «Ծաւադ եմ, իմ անունը Համզա է» խոնարհուաթեամբ պատասխանեց Քեալ օղլանը:

— «Ուրեմն դուք մի առ մի լոել էք մունետիկի տուած յայտարարութիւնը, հարցուց փաշան»:

— «Այս լսել եմ, փաշա էֆէնտի, պատասխանեց Քեալ օղլանը»:

«Ուրեմն երևում է որ դուք ձեզ վրայ վստահ էք, որ կարող էք այդ ծառայութիւնը անել ինձ համար»:

«Մինչև վերջին շունչս պատրաստ եմ, որքան կարելի է, հնարաւոր միջոցներ գործ դնել, ձեր բաւականութեանը լրում տալու համար, միայն եթէ դուք ձեր արած խոստումները իրագործելու, ապահովութեան մի նշան ցոյց տաք ծառայիդ»:

Հասան փաշան բաւականին փորձուած մարդ էր, Համզայի ժիր ու խելօք պատասխանները լսելով, համոզուեց որ այդ գործը նա կարող է գլուխ բերել: Տեղային սովորութեան համաձայն, ակնարկեց նստել և հրամայից ծառային սուրճ մատուցանել հիւրերին: Իսկ ինքը որ նստել էր փափուկ օթոցի վրայ, որի տակ կային զանազան գործերի վերաբերեալ թղթի կտորներ, իսկոյն բարձրացուց օթոցի մի ծայրը և հանեց մի կտոր թուղթ, որի վերայ նախապէս արդէն գրուած էր ստորագրութեան ձևով մի քանի խօսքեր: Այդ ստորագրութիւնը վաւերացնելու համար, որ պիտի տար Համզային, իբր ապահովութիւն, մատը թափախեց տաճկական գեղին արոյրէ թանաքամանում, սեղմեց թղթի վերայ, ինշան վաւերացման և տուեց Համզային ասելով, — «Ո՛՛ո այս իմ անսուտ ստորագրութիւնը և վստահ եղիր, որ եթէ դու իմ նպատակը կատարեցիր, ինքդ էլ քոյ նպատակին արդէն հասած կը լինիս: ահա այս մի քանի ոսկին էլ կտամ քեզ, որպէս ճանապարհածախք, որ նեղութիւն չը կըես:

Քեալ օղանը ստանալով Հասան փաշայի տուած ոսկիքն ու ստորագրութիւնը՝ համբուրեց դրեց ճակատին և ապա խնամքով ծալեց դրեց ծոցը. իսկ մունետիկն էլ ստացաւ թէ իւր աշխատսւթեան վարձը և թէ մի ընտիր խալաթ, որ մինչև անգամ երազներումն էլ չէին տեսել: Երկուսը միասին իրանց խորին շնորհակալութիւնը լայտնելով փաշալին, ուրախ տրամադրութեամբ դուրս եկան նրա ապարանքից:

Այդ գիշեր մունետիկը Քեալ օղանին իրանց տուն հրաւիրեց և իւր ձեռնհասութեան չափով պատուեց ու հիւրասիրեց: Այնքան նրա հիւրասիրութիւնը չէր, որքան քաջալերական խօսքերը, որոնցով աւելի ու աւելի սրտապընդուեց Քեալ օղանը, աչքի առաջ ունենալով ապագայի խոստացուած երջանկութեան լոյսերն ու ոսկի ժամերը:

Գիշերը բաւականին անցել էր, մունետիկի աղքատիկ սեղանին վերջ տրուեցաւ: Բայց նրանք գարձեալ երկար ու բարակ խօսում էին և խօսակցութեան միակ առարկան Քեօռօղուաթն էր... միայն այդ միջոցին կամաց կամաց ծանրանում էր նրանց աչքերը և պահանջում էր քնել:

Այդ բազմամարդ և աղմկալի քաղաքը ամբողջովին թաղուել էր խոր լառութեան մէջ: Ամեն մարդ գլուխը խոնարհեցրել էր բնական պահանջի առաջ, նրանք ևս չը կարողացան գիմադրել այդ պահանջին և վերջ տալով խօսքերին մտան անկողին փոքր ինչ հանգստանալու:

Արդէն աղօթրանը սկսել էր բացուիլ: զանազան ցեղի մեծ ու փոքր թռչուններ արշալոյսի ժոմտնակ ծլվում էին պճնազարդ ծառերի բարձր գագաթներին: Սոխակը սկսել էր իւր գալլալիկը առաւտեան մեղմիկ հովերի հետ միասին: Իիւրաւոր գունագեղ ծալկունք և նրանց թագուհի վարդն էլ հետները օրօրուելով անոյշ զեփիւոից իրանց անուշահոտ բուրմունքը տարածում էին օդի մէջ: Բնութիւնը պարզ էր ու խաղաղ: Մի կողմից լսվում էր հեղասահ առուակների խուլ խոխոջները, միւս կողմից թռչնոց հեշտալուր ճռուողիւնն ու սուլոցը, որոնք միախառնուելով միմեանց հետ, կարծես բարի ճանապարհ էին մաղթում Քեալ օղանին, որ համբուրուելով մունետիկի հետ, ճանապարհ ընկաւ դէպի իւր նպատակատեղին—Զամլիբէլ:

Նա գնում էր աներկիւղ, որովհետեւ պատերազմ չէր գնում, որ սարսափէր այն հրէշներից, որոնք իրանց շուրջը

սարսափ էին տարածել։ Այսպէս մի քանի օր շարունակ ճանապարհ գնալուց յետոյ՝ մեր ճանապարհորդը արդէն հասել էր Չամլիբէլ։ Սակայն պէտքէ ենթադրել, որ իւր սքօղեալ անվեհերութիւնն ու խորամանկութիւնը նա թագորել էր աչքի ընկնող ցնցոտիների տակ։ Համարեա կէսօրն անցել էր և ինքը բաւական յօդնած ճանապարհների դժուարութիւնից, մանաւանդ մի կողմից էլ քաղցն ու ծարաւը բաւական նեղել էին թշուառին։ Ոտք գնելով այն արիւնոտ հողի վերալ, նստեց մարմարեալ շատրուանի մօտ, ուր ուրախ խրխինջներով գալիս էին Քեօռօղլու նժոյգների երամակները ջուր խմելու։ Խորամանկ Քեալ օղլանը դիտմամբ նստեց աչտեղ և հանելով իւր ճանապարհորդական պարկից մի կտոր հաց ու պանիր, որոնք չորացել էին արեգակի կիզող ջերմութիւնից, ջրում թաթախելով, սկսեց ախորդակով ուտել։ Փօրը կշացրուց, քաղցն ու ծարաւը անցան, թուլացած ջղերը մի քիչ կազդուրուեցին։ Նա ճանապարհորդական պարկը բարձի փոխարէն գրեց դլխատակն ու հանգիստ քնեց։ Միայն այդտեղ—շատրուանի մօտ քնելու բուն պատճառն այն էր՝ որ քաջերից մէկին պատահի ու նրա միջոցաւ հնար ունենալ ներկայանալ իրան անծանօթ հռչակ վայելող Քեօռօղլուն։

Քեալ օղլանը երկար չէր քնել, երբ յանկարծ մի դղըրդիւն հասաւ նրա ականջին։ Տեղից սարսափահար վեր ցաթկեց, աչքերը տրորելով, զննելով տեսաւ որ նժոյգների մի երամակ ցայտելով ու կալտուելով շտապում էին իրանց սովորական աւազանից ջուր խմելու։ Նա գլուխը կրկին դրեց պարկի վերալ և աչքերը դարանակալ աղուէսի նման փակելով՝ սուտ քուն մտաւ։ Քեալ օղլանը ջրափին պարկած ալնպիսի գիրք էր տսւել իրան, որ աւազանի վճիտ ջրի մէջ հայելու նման պարզ երեւում էր իւր ստուերը։ Նժոյգները որոնք մօտենում էին աւազանին, Քեալ օղլանի ստուերից

խրտնում էին ու փռնչալով և խրտնելով յետ էին քաշվում։ Դամուրչօղլին ու Քեօսա Քեանհանը գարմացած միմեանց հարցնում էին, սա ինչ բան է, ինչո՞ւ են խրտնում այս կենդանիները. մի գուցէ ջրի մէջ վիշապ կամ ուրիշ կենդանիք են գոյացել, որ այդպէս խրտնում են խեղճ անասունները։ Իսկոյն և եթ քաջերը մօտեցան աւազանին, և ինչ են տեսնում, ահա մի գալուկ երեսով նիհազ երիտասարդ, ցնցոտիներ հագած, պարկը գլխատակին հանգիստ քնել է աւազանի մօտ։ Բայց Քեալ օղլանը որ աչքի տակով նալում էր քաջերին, Քեօսա Քեանհանի ալլանդակ կերպարնքից սարսափեց, մի սարսուռ անցկացաւ նրա ոսկորներով, գոյնը բոլորովին փսխուեց, մազերը բարձրացան, միսը փշաքաղուեց, ամբողջ մարմնով երկիւղից գողում էր ու անշարժ սկեռուել—տափին էր կպել։

Քեալ օղլանին գեռ ձայն չը տուած, Դամուրչօղլին զարմացած ասաց ընկերին. — Բաբայ Քեանհան, այս ինչ բան է, ես զարմանում եմ. ամբողջ երկերը մեզանից դողում ու սարսուռիմ է, «հաւքն իր թեւով, օձն իր պորտով» չի վստահանում մեր սահմանից անցնել, այս երիտասարդը ինչպէս է եկել այստեղ և աներկիւղ քնել, անպատճառ սրանում մի գաղտնիք կամ խարդախսութիւն կայ։

— Ես էլ եմ զարմանում, վրայ բերեց Քեօսա Քեանհանը, բայց ճանճն ինչ է, որ ճենճն ինչ լինի, ուզում ես այս ըոպէին սրան կամ ջրառուզ անեմ, կամ խեղդամահ, վերջանայ գնայ ու հոտն անգամ չերեսի։

— Ոչ, ասաց Դամուրչօղլին. անտեղի գործ բռնելը խղճի գէմ է, գեռ մի փոքր սպասիր, իսկապէս տեղեկանանք սրա ով կամ ինչ մարդ լինելը, յետոյ մենք գիտենք մեր աւնելիքը։ Այս խօսքերն ասած չասած, Դամուրչօղլին մեզմօրէն ձայն տուեց. — «ալ տղայ վեր կաց տեսնենք ով ես, կամ ինչո՞ւ ես պարկել այստեղ»։

Կիսակենդան Քեալ օղլանը հազիւ կարողացաւ տեղից շխտկուել, երկիւղից լեզուն պապանձուեց, չը կարողացաւ պատասխան տալ հարցին. միտոն աչքի տակով մէկ աջ նայեց ու մէկ ձախ, տեսու՛ որ երկու հսկաներ շրջապատել են իրան, այն է որ պէտքէ կլանեն ու բնաջինջ անեն: Մի վոքը շունչ առած, արտասուաթոր աչքերով փարեցաւ նրանց ոտքերին ու սկսեց ողորմագին աղերսել, որ ինալեն իրան:

— Մի վախենար, ասաց Դամուրչօղլին, ու թեկից բըռնելով ոտքի կանդնեցրուց, աչքերը սրբել տուեց ու կրկին հարցուց նրա որտեղացի կամ ինչ մարդ լինելը:

Քեալ օղլանը գողում էր և հազիւ լսելի ձայնով միայն այսքանը տրտասանեց—«ձեր ծառան եմ»:

— «Ինչու ես եկել տյստեղ, կրկնեց Դամուրչօղլին:

— «Անտէր—անտիրական տղայ եմ պատասխանեց Քեալ օղլանը, լսել եմ քաջ Քեօողլու համբաւը, եկել եմ նրա մօտ, որ թէ իրան և թէ նրա բոլոր քաջերին, որպէս ստրուկ, ծառալութիւն անեմ ու հանգիոտ ապրեմ, որովհետեւ զզուել եմ քաղաքի ազմկալի կեանքից և մեղկ ու վատթար վարք ու բարքից. մանաւանդ անազնիւ մարդկանց զազրալի արարքներից ու վարմունքից»

Վերջին խօսքերը քաջերին շատ գուը եկաւ, որովհետեւ հէնց իրանք էլ ալդ համոզունքին էին և մասամբ ալդ էր պատճառը, որ թողել էին իրանց ծննդավայրը և թափառում էին ամայի անապատներում ու անմարդաբնակ լեռներում, զուրկ ամեն տեսակ մարդկալին յարաբերութիւնից:

Քաջերը Քեալ օղլանին հետները վերառած տարան ներկայացրին Քեօողլուն ու պատմեցին նրան ինչ տեսակ յայտնութիւր,

Քեօողլին թեթև հարց ու փորձից յետով, ընդունեց Քաջալ Համզալին իւր բաղմաթիւ ծառաների թըրում և տուեց նրան ձիապանութեան պաշտօնը, բայց որպէս փորձ, յանձնեց

նրան պաշտպանելու մի նիհար քոսոտ ու յետ ընկած ձի: Իսկ Համզան այն աստիճան ինսամում ու պաշտպանում էր այդ ձիուն, որ մի մայր իւր սիրասուն զաւակի վերայ հազիւ այնքան ինսամք ու գութ կարող էր ունենալ, որովհետեւ Քեալ օղլանը առանձին նպատակով էր շարժվում:

Քեօողլին որ սովորութիւն ունէր շաբաթը մի անգամ գնալ ախոռը ձիաների գրութիւնը տեսնելու, այս անգամ զարմացաւ Քաջալ Համզալի ինսամքին յանձնուած ձիու վերաբ: Նա որ առաջ բոլորովին յետ ընկած էր, հիմա օր օրի վրայ առաջ գալով, գիրանում ու գեղեցկանում էր:

Քեալ օղլանի այսքան հօգատարութիւնը տեսնելով, այս անգամ Քեօողլին իւր Տօռաթը յանձնեց նրան հեաւեալ խիստ պատւէրը տալով „Հապա, քեզ տեսնեմ թէ սրան ինչպէս պէտք է պահես ու խնամես, որ հեծնելիս նրա կնքի աստղերի հետ խաղալ”.

— Աչքիս վերայ, տէր իմ, ուրախ ուրախ պատասխանեց Համզան. որովհետեւ հէնց նրա իղձն ու փափաքը այդ էր: Նա այնուհետեւ ալլես ուրիշ ոչ մի պարապմունք չունէր. զօր ու գիշեր մէկ արած միշտ Տօռաթին շփելով ու շոյելով էր պարապում, սիրում ու փայփայում, ոտից մինչ զլուխ ամեն օր լուանում ու սանտրում էր այնպէս մաքուր „Արապ թիմորի” էր տալիս, որ նժոյգը գառնում էր ինչպէս մի գեղեցիկ ջնարակած փալլուն առարկայ:

Համզան այսպէս մի ամբողջ տարի Քեօողլու մօտ ձիապանութեամբ պարապելով, զօր ու գիշեր անդադար մտածում էր, թէ ինչ հնար գտնի մի կերպ Ղըռաթը փախցնելու, բայց ոչ մի հնար չկար, որովհետեւ Ղըռաթի խնամակալը հէնց ինքը Քեօողլին էր:

Եթէ մի օր Քեօողլին հարձեմում իւր հարձերի հետ ձոխ սեղանի շուրջը նստած զուարձանում էր, իսկ քաջերի մեծամասնութիւնը ամրոցից գուրս գնացել էին որսի, ալդ

որը Համզի գլխում իւր նպատակին հասցնող մի միտք ծափեց, թէ „ահա մի ամբողջ տարի է ես այսաեղ քաշ գալով չարչարփում եմ, բայց սրանից յարմար միջոց բնաւ չէ պատահել ինձ. ուրեմն էլ ո՞ր աւուր եմ սպասում... թէպէտ առ ալժմ Ղըռաթը տանել անկարելի է, սակայն ես կը տանեմ Տօռաթը, կտամ Հասան փաշալին, թէ որ քոյը նա ինձ տուեց, հօ լաւ, իսկ թէ որ չը տուեց, գոնէ թանգ գնով կը ծախեմ, դարձեալ իմ տարեկան փարձը դուրս կգալ“:

Ալսպէս վճռելով Քեալ օղլանը ինքն իրան, իսկոյն և եթ թեսերը վեր քշտելով մօտեցաւ Տօռաթին և մի այնպիսի թիմար տուեց, որ այդքան ժամանակ դեռ ևս մի այդպիսի ծառալութիւն չէր արել Տօռաթին. Քորիչի շըխկշըխոցի հետ, որ միախառնվում էր չքնաղ նժոյգի ոտքի տրոփիւնի հետ, մի առանձին հրճուանք էին զգում թէ Քեալ օղլանը և թէ Տօռաթը. Գործը վերջացրուց, պախուրցը սանտրեց—կանոնաւորեց, պոչը կապեց, աչքերը շոյեց ու սբբեց, բաշը ձըդձբեց, մէջքը տրորելով փափուկ թամբը դրեց քամակին, փորքաշները չափաւոր ձգեց, ընտիր մետաքսից ոլորած պինդ երաստանակը, որ զարդարուած էր աչքի գոյնզգոյն ուռունքներով հանեց գլխից և նրա փոխարէն կախեց շնչքից եռանկիւնի ծալուած, արծաթապատ թալիսմաները, կանոնաւոր սանտրեց և սրտատրով սպասում էր յարմար ըոպէին:

Արդէն երեկոյ էր, արեգակը տուել էր իւր վերջին հրաժեշտը, լուսը կամաց կամաց չքանում—անհետանում էր, սեաթուր գիշերը մուալլ թեսերը հետզհետէ անզգալի կերպով տարածում էր ընդհանուր աշխարհի շուրջը և անհամար աստղերի շարքերը պապղում էին երկնակամարի վերայ... մի խօսքով ամեն տեղ տիրեց խորին լռութիւն... մերթ ընդ մերթ լովում էր չարագուշակ բուերի և ուրիշ խաւարասէր թաշունների խռպոտ ձայները. Առիւծը մոնշելով դեռ նոր էր դուրս եկել որջից իւր որսն անկլու: Մի և նոյն ժամա-

նակ Քեալ օղլանը զգուշ դուրս եկաւ ամբոցից գաղտագովի և հետը տարտւ Տօռաթը:

Այդ գիշեր Քեօռօղլին երազում տիսնում է, որ իբր թէ այն սիրելի թառլանը (բազէն) որ մշտապէս հետը ման էր ածում ձեռքի վերայ որսի գնացած ժամանակ, յանկարծ թունում է ձեռքից և բարձրանալով սղի մէջ կորչում—անհետանում է: Յանկարծ քնից զարթնում է և խելացնորի նման տեղից վեր ցատկելով, մի երկու պտոյտ է անում սենեակի մէջ, կըկին տեղը նստում ու խոր մտածում և ինքըն իրան ասում—„Ես մի կորուստ պիտի ունենամ, այն, մի մեծ կորուստ:“

Առաւօտեան լուսաբացին յանկարծ ամբոցում տարածվում է, որ Քեալ օղլանը Տօռաթը փախցրել տարել է:

Այլազը ուզում էր շուտափոլիթ ներկայանալ Քեօռօղլուն և յայտնել պատահած անցքի մասին, բայց քաշվում էր, որսվհետեւ գեռ որոշեալ ժամը չէր հասել—Քեօռօղլին այդ ժամանակ դեռ քնած էր:

Քեօռօղլին ինքն էր տնօրինել, որ մինչև իրան քնից զարթնելը, լուացուելն ու նախաճաշիկ անելը ոչ ոք իրաւունք չունի իւր մօտ ներկայանալու և մի բան խօսելու, որքան էլ ինդիրը փափուկ ու ստիպողական լինէր:

Այլազը տրորվում էր, մի կողմից մտաբերելով յայտնի կորուստը և միւս կողմից անժամանակ Քեօռօղլուն ներկայանալը: «Ինչ կուզէ լինի, վճռողաբար ասաց ինքն իրան, մինչև անգամ գլուխս էլ որ կտրէ, այնու ամենալիւ պիտի ներկայանամ, որովհետեւ այս դէպքը ուրիշների նման չէն: Այս մտածմունքով ու վճռականութեամբ համարձակ ներս մտաւ Քեօռօղլու ննջարանը:»

Քեօռօղլին գեռ անկողնում պարկած էր, տեղից շիտկուեց, նօթերը կիտած, խոշոր աչքերը ալնպէս չըռեց Այլազի վերայ, որ քիչ էր մնում թէ հսկայ տղամարդը երկիւղից.

սարսափէր ու դողար:

Ոչ սակաւ շփոթուեց նա և Քեօռօղլին, որովհետեւ Այ-  
քազի ներկայանալը անժամանակ էր. բայց և այնպէս, նա  
քաջերին յատուկ անվեհերութեամբ սրտապնդուեց ու հար-  
ցուց. — „Ի՞նչ կայ, այսպէս տարաժամ ինչու ես եկել, կամ  
ինչ ես ուզում, Այվազ խան“:

— Զեր ողջութիւնը կը ցանկամ. անվստահութեամբ  
պատասխանեց Այվազը:

— Ասացէք տեսնեմ ինչ է պատահել, կրկնեց Քեօռօղլին.

— Ներեցէք որ համարձակուել եմ ժամանակից դուրս  
ներկայանալ ձեզ, ասաց Այվազը, բայց խնդիրը խիստ կա-  
րես է:

— Ի՞նչ խնդիր, հարցուց Քեօռօղլին:

Այվազը ձեռքերը տրոթելով ու երեսը շառագունած  
յալտնեց, որ իրանց բացակալութիւնից օգտուելով, չամզան  
այս գիշեր Տօռաթը փախցրել տարել է:

Քեօռօղլին երբ լսեց ալդ անսպասելի լուրը, համարեա  
զարմացաւ և ակնապիշ նալում էր Այվազի երեսին, մինչև  
անզամ չէր հաւատում իւր լսածներին. այնպէս էր կար-  
ծում, թէ դեռ երազի մէջ խարիսափում է:

Մի փոքր ուշաբերուելով, երեսը դարձուց այն կողմը,  
որ մի ծառայ վարագուրի ետևը պատրաստ կանգնած, ամեն  
ըստէ սպասում էր քաջի հրամանը ճշտիւ կատարելու... «Ա  
տղալ, գոչեց, տուր ինձ իմ սազը»:

Ճարպիկ ծառան անմիջապէս շապկահան արած սազը  
յանձնեց իւր բանաստեղծ տիրոջը ու կրկին քաշուեց իւր տեղը:

Քեօռօղլին ըստ աշուղական սովորութեան ներդաշնա-  
կեց սիմերը և սկսեց նուագել ու երգել.

Այվազ, ինձանից պահանջդ,  
Գլուխ է թէ՝ մազ է, ինչ է.

Արի դու ճշմարիտն ասա,

Արարքդ տնազ է, ինչ է:

Այվազ, խօսքդ չարած անտես,

Որ զարմացաւ ես ինքս այսպէս,

Այս ինչ բաներ եմ լսում ես.

Բաղդս դատախազ է, ինչ է:

Ում որ եղալ ես կարեկից,

Նա իմ սրտին թողեց կոկիծ,

Քեօռօղլի, զարթիր խոր քնից,

Տեսածդ երազ է, ինչ է:

Քեօռօղլին երգը վերջացրուց, վերկացաւ տեղից, շորերը  
հագաւ, լուացուեց, գլուխը սանտրեց, երկար պեխերը ոլո-  
րեց, առիւծաբար մի քանի պայուտ արաւ սենեկի մէջ և  
ապա նստեց իւր սովորական նտխաճաշիկն անելու:

Այդ ժամանակ Այվազը գեռ. կանգնած էր դրան մօտ,  
որ յանկարծ Քեօռօղլին ուշքի գալով, տեսաւ որ կանգնողը  
Այվազն է. — «Դեռ այստեղ ես Այվազ», ասաց Քեօռօղլին:

— Այն, տէր իմ, պատասխանեց Այվազը:

— Ուրեմն գնա հրամալիր, որ Ղըռաթը թամքեն—  
պատրաստեն, մինչև իմ նախաճաշիկը վերջացնելը:

Այվազը գլուխ տալով դուրս եկաւ սենեկից ու աճա-  
պարելով ձիանների մօտ՝ հրամալեց որ շուտով Ղըռաթը  
թամքեն պատրաստեն, որովհետեւ Քեօռօղլին գնալու է Տօ-  
ռաթը տանող ապերախտ չամզալին բռնելու և վրէժ առնելու:

Չիապանները իրար խառնուեցին, չը գիտէին թէ ինչ  
տեսակ սանձեն ու թամքեն, կամ փորքաշները որ աստիճա-  
նի ձգեն, որ Քեօռօղլին չը զարանալ, որովհետեւ մշտապէս  
Քեօռօղլին իւր ներկայութեամբ էր թիմարել տալիս, թամ-  
քում ու կերակրում:

Ղըռաթը պատրաստ կանգնած էր գոմում, դուրս չէին քաշել, որովհետև նրա ոտքերի շղթաների բանալին Քեռողլու մօտն էր գտնվում:

Քեռուզլին դուրս եկաւ սենեկից, ստորադրեալ քաջերը երբ տեսան նրա խռովեալ դէմքը՝ բոլորը միասին սարսուազ զգացին, նրա սեորակ աչքերը բնի մէջ խաղում էին, կուտակուած թուխ ամպերի նման կախուել էին թաւ ունքերը: լերկ ու լախադիր ճակատի վերալ նշմարվում էին կնճիռներ, վիշապաձեւ պեխերի վերայ իշխող ահուելի քթից կարծես կրակ էր արտավիժում, իւրաքանչիւր քալլափոխին նամոնչում էր վիրաւոր առիւծի նման: Քեռուզլին ալսպէս այլակերպուած, բարկութիւնից շրթունքները դողդողալով, ներս մտաւ ախոռը, ուր պատրաստ կանգնել էր Ղըռաթը:

Քեալ օղանն արդէն բաւական ճանապարհ կտրել էր. Քեռուզլու յուսը միան մնացել էր Ղըռաթի վերալ և ալդ պատճառով մի քանի խրախուսական խօսք ասաց Ղըռաթին:

Քեռուզլին ուր որ գնում էր՝ սազը անբաժան իւր հետն էր տանում: Թէպէտ ժամանակը որքան էլ թանկ էր, այսու ամենայնիւ այստեղ ևս չը կորցուց իւր ամենօրեալ սովորութիւնը: Մի քանի վալրկենում սկսեց կարգի բերել սազը և եռանդուն կերպով սկսեց երգել հետեւեալ սրտառուչ գովասանական երգը —

Եյս ախոռի զարդը գու ես,  
Սիրուն Ղըռաթ, կայտառ Ղըռաթ,  
Ինձ Քաշալ Համզին հասցնես,  
Սիրուն Ղըռաթ, կայտառ Ղըռաթ:

Քաղտնի թերդ բաց արա,  
Զերթ ծիծեռնակ թոիր գնա,

Եղբայրդ գերի ըլ մնայ,  
Սիրուն Ղըռաթ, կայտառ Ղըռաթ:

Քեռուզլին եմ, ես անդադար,  
Քեզ նստած ընկնեմ ճանապարհ,  
Երթամ ման դամ օտար աշխարհ,  
Սիրուն Ղըռաթ, կայտառ Ղըռաթ:

Երգը երբ վերջացրուց՝ ծոցից հանեց բանալին, տուեց ծառաներից մէկին, որ բաց անէ Ղըռաթի ոտքի շղթան:

Քեռուզլին ախոռից դուրս գալով, դուրս քաշեցին նաև նժոյգին: Քեռուզլին մօտեցաւ նրան, համբուրեց աչքերը, ոտը գրեց ասպանդակին և ծտի նման թեթև թռաւ քամակը, մի երկու պտոյտ արաւ, որ նժոյգի կոմած ջղերը ձգուին ու թեերը բացուին: Փաջը համարեա ոչ մի զէնք չունէր վերան, բացի իւր պողովատիկ սրից: Գլուխը փաթաթել էր մետաքսեայ ապարօշով, որի ծալրերը քամակի կողմից ալեծածան փողփողում էին հեզասիք հովի դէմ և գլուխը պաշտպանում արեգակի ջերմութիւնից:

Նժոյգն արդէն տաքացել էր, փոքրիկ ականջները ցցելով ալնպէս խրխինջ էր արձակում, ինչպէս մի մարդ, սպառնալիք կարդա իւր հակառակորդին:

— Արդէն ժամանակ է գնալու, իմ չարաճընի, ասաց Քեռուզլին իւր ձիուն: Դէհ, մնաք բարեաւ իմ քաջեր, ազօթեցէք ինձ համար, ասաց ու դուրս գնաց ամրոցից:

Ղըռաթը այն աստիճան արագ էր ոլանում, որ օդալին թռչուններն անդամ ամաչում էին նրա գնացքից և ծածկվում թիերի ու մացառների տակ: Ղըռաթի ահարկու խըրխընջոցից լեռներն ու ձորերը արձագանք էին տալիս և անդրադարձնում:

Այդ միջոցին Քեալ օղլանը լանկարծ լետ նայեց դէպի Զամլիբէլ, որ տեսնի թէ արդեօք իրան հետևող կալ թէ ոչ նրան այնպէս թուաց, որ սար ու ձոր դղրդում է և մըրկայոյզ թանձր փոշու մէջ մի ինչ որ բան սկին է տալիս: Զգաց ինքն իրան գալիք փորձանքը և տխրամած մըմնջաց.

— „Այս, Աստուած իմ, այս ինչ եմ տեսնում, այս եկողը անշուշտ Քեօողլին է, որ ինձ այս ըոպէիս սրախողող կանէ և մեծ թիքէս ականջս կը թողնի՞։ Ահա այսպէս շփոթուած ու տարակուասծ դողդողալով մտաւ մօտակալ ջրաղացը, որ ինքը նախապէս մտադիր էր փոքր ինչ հանգստանալու: Աճապարանօք ձին ներս քաշեց, մտաւ ալրտունը, ոտքից մինչև գլուխ ալիւրոտած դուրս եկաւ դռանը կանգնեց որպէս ջաղացպան:

Քեօողլին կալծակի արագութեամբ հաստու ետևից, կանգնեց ջաղացի դռանը, արիւնը աչքերը լցուած, խրոխտալի ձայնով հարցուց կեղծ ջաղացպանին. — „ինձանից առաջ եկող կարմիր ձիաւորը ուր գնաց՞։

— Ներոն է վստահաբար պատասխանեց կեղծ ջաղացպանը: Քեօողլին ձիուց վալը իջաւ և Ղըռաթի սանձը մեկնելով ջաղացպանին, ապաց. — «առ պահիր այս սանձը մինչև իմ վերադառնալու»։

Ջաղացպանը մերժեց ասելով. — «ներեցէք աղայ, ես վախենում եմ, չեմ կարող պահել այդ ամեկի կենդանուն»։

— Մի վախենար, պահիր, կըկնեց Քեօողլին, սա քոյ ասած ձիաններից չէ:

Քէալ օղլանը ոչ թէ վախենում էր, ալլ իսկապէս կեղծում, որ ինքն իրան չը մատնէ և հէնց ալդ միջոցով էլ պէտքէ հասնէր իւր բուն նպատակին.

Վերջապէս իբր թէ յակամալից, վախվախելով մօտեցաւ ձիուն և սանձից բռնեց ու անշարժ կանգնեց: Իսկ Քեօողլին պատառող վազրի նման ներս մտաւ ջաղացը, որ այսպէս դու Ղըռաթը ձեռքովդ յանձնեցիր ինձ, ոտդ գիր երեսիս արի այնտեղ, ես էլ նոյնպէս իմ ձեռքով կըկն քեզ յանձնեմ... դէհ մնաս բարով քաջակորով

Հատարիմ ծառալին սրախողող անէ ու Տօռաթը դարձնէ: Բայց Քեալ օղլանը որ դուրսն էր, առանց ժամանակ կորցնելու, մի ակնթարթում թռաւ Ղըռաթի քամակը, գլուխը շուռ տուեց և ջաղացից մի կրկէսաչափ հեռաւորութեան վերալ կանգնեց:

Քեօողլին բանից անտեղեակ, միամտաբար դեռ ջաղացը տակն ու վրալ էր անում, ոչ տեղ թողեց, ոչ անկիւն, մինչեւ անգամ ամբարն սւ ցրտօնն էլ նայեց, բայց ոչ ոքի չը դտաւ, բացի մի ծերսւնուց և Տօռաթից, որ կապուած էր սեան վերալ ամբարցած մի օղակից: Իսկոյն հասկացաւ որ ինքը խաբուած է. գլխին զարկածի նման դուրս թռաւ ջաղացից, բայց իզուր, որովհետև Քեալ օղլանը արդէն Ղըռաթի վերալ նստած հեռուն կանգնել էր:

Քեօողլին մնաց քարացած, ծունկերը ծալուեցին ու թեները թուլացան, կարծես դիւցազնական հոգին ընկճուեց, բարկսւթիւնից արտասուքը հեղեղի նման թափվում էր աչքերից: Այստեղ խաղ ու կատակ չկար, կատարուածը իրողութիւն էլ, նրա կորցրածը Ղըռաթն էր, իրայ թե ու թիկունքը: Ստիպուած այդ բոպէաբար պատահած արկածից, նա իւր վեհութիւնը լետ դըեց ու սկսեց աղաչել պաղատել:

Իսկ խորամանկ Քեռլ օղլանը հետեւեալ մի քանի խօսքով վերջ դըեց նրա աղերսանքներին: — «Փաջդ Քեօողլի, ասաց նա, այս բոպէին բոլորովին զուր են քոյ ջանքերն ու աղաչանքները, ես Ղըռաթը անպատճառ պէտքէ տանեմ Միլիստրալ և յանձնեմ Հասան փաշալին, որովհետև նա խոստացել է, ով որ քոյ Ղըռաթը նրան տանի, նա իւր Թելլի խանում քոյրը պէտքէ նրան կնութեան տալ, այդ պատճառով էլ ես տանում եմ: Միմիալն թող Աստուած վկայ լինի մեր մէջ, որ ինչպէս դու Ղըռաթը ձեռքովդ յանձնեցիր ինձ, ոտդ գիր երեսիս արի այնտեղ, ես էլ նոյնպէս իմ ձեռքով կըկն քեզ յանձնեմ... դէհ մնաս բարով քաջակորով

տէր“։ Այս ասելով նժոյգի դլուխը շուռ տուեց դէպի Սկ-  
լիստրալ և կալծակի արագութեամբ անհետացաւ մերձակայ  
լեռների ու բլուբների լետեր։

Խեղճ Քեօռօղլին անճարացած, ալսուել ևս ստիպուեց  
սազը առնել ձեռքը ու բորբոքուած սրտով երգել հետեւալ  
սրտաճմէկ ու տխուր երգը.—

Գնաց, էլ ասել չի ուզում,  
Երա գոռ գոչին Քեօռօղլի,  
Անցածն էլ չի վերադառնում,  
Մնացիր նկուն Քեօռօղլի։

Քեալ օղլանն իր արածն արաւ,  
Աւքերիդ լուսը խաւարաւ,  
Երբ Ղըռաթը ձեռքից թռաւ,  
Շըջիր երերուն Քեօռօղլի։

Չիք ցաւերիդ դեղ ու դարման,  
Էլ չունես վիճակ խնդական,  
Քա՞զի եղար ջրաղացպան,  
Կո՞չ է գալ աղուն Քեօռօղլի։

Քեօռօղլին երգով կարծես փոքր ինչ ամոքեց իւր  
սրտում նոր բացաւած կոկծալի խոր վէրքը։ Թախիծն երեսին  
նստաւ Տօռաթը, տրտում ու տխուր վերադարձաւ Զամլիքէլ։  
Սակայն պէտքէ գիտնալ, որ երբ բաղդի անիւր հակառակ  
է շրջում, հետևակէս կեանքի դառն պատահարներն էլ մի-  
մեանց լաջորդելով, մինչև անգամ ամենափորձառու մարդ-  
կանց մոլորեցնելով, լուսահատութեան գագաթնակէտին են  
հասցնում։ Այսպէս եղաւ նաև մեր քաջ Քեօռօղլու վիճակը։  
Մի փոքր տարածութիւն էր մնացել որ հասնի Զամլի-

քէլ, տարաբաղդաբար Տօռաթը լոգնեց մնաց ճանապարհին,  
նա այլ ևս չէր կարող տանել իւր վերայ նստող հսկալին։  
Եւ այս նրանից էր, որ նախընթաց օրը Քեալ օղլանը իրալ  
երկիւղից այնքան էր չարչարել խեղճ կենդանուն, որ բոլո-  
րովին թուլացել էին ջղերն ու մկանունքը։

Քեօռօղլին անճարացած վալր իջաւ, ձին առաջ խառ-  
նած հազիւ հազ բարձրացաւ բլրի գագաթը։ Այդ միջոցին  
Այգազը մի քանի քաջերի հետ միասին նստել էին դղեկի  
պատնէշին և հեռադիտակով նայում էր դէպի Քեօռօղլու  
եկած ճանապարհը։ Յանկարծ տեսաւ որ մէկը երևաց բլրի  
վերայ և մի ինչ որ կենդանի առաջ խառնած գալիս էր  
դէպի Զամլիքէլ։

Այգազը երեսը շուռ տալով, ասաւ մօտի քաջերին։—  
„Տղայք, ահա մէկը երեսում է բլրի վերայ, բայց չը կարծեմ  
թէ Քեօռօղլին լինի, ինչպէս երեսում է դա չարչի է, մի ինչ  
որ կենդանի առաջ խառնած գալիս է դէպի մեզ, միայն  
զարմանքն այն է, որ երկար ժամանակ է մեր կողմը չարչի  
չի եկել, այս հիվ պէտքէ լինի։

Հետաքրքիր քաջերը աւան հեռադիտակը ձեռները ու  
հերթով նալեցին, բայց միեւնոյնը տեսան, ինչ որ տեսել էր  
Այգազը։

Այս երեսոյթը երկար չը տևեց, ահա Քեօռօղլին քրտնա-  
թաթախ, թամքը շալակած մօտեցաւ դղեկին։ Բոլոր քաջերը  
զարմացան, բայց առաւելապէս զարմացաւ Այգազը։ Այս եղե-  
լութիւնը տեսնելով, նա իսկոյն բացականչեց։—«Ճղայք,  
տուէք իմ սազը, մի երկու խօսքով շնորհաւորեմ մեր նոր  
վաճառականին և իւր աջող առուտուըրը։ Այգազը սազը վեր  
առնելով դրեց կուրծքին ու երգեց հետեւալ ծաղրական երգը։

Նոր վաճառական ես դառել,  
Առուտուըրդ շնորհաւոր,

Երևի լաւ ես սովորել,  
Առուտուրդ շնորհաւոր:

Հրապարակ ուշ գուրս եկար,  
Ամենից լաւ սովորեցար,  
Գոյնի վերայ սիրահարուար,  
Առուտուրդ շնորհաւոր:

Չնաշխարհիկ քոյ պիսակ ձին,  
Տարար տուիր քաչալ Նամզին,  
Կարմիր ձին էր քոյ սիրելին,  
Առուտուրդ շնորհաւոր:

Քեզանից չառած մեծ գումար,  
Ի՞նչպէս փոխեց նա հաւասար,  
Խելք չունէր նա լիակատար,  
Առուտուրդ շնորհաւոր:

Ջրաղացում ինչու մտար,  
Որ այդ փորձանքին հանդիպար,  
Քոյ Ալվազ խանն եմ ջրատար,  
Առուտուրդ շնորհաւոր:

Քեօռօղլու գրութիւնը վատ էր. նա տրտում տխուր  
մտաւ գղեակը և ոչ ոքի չը պատմեց իւր գլխի անցքը: Ամեն  
բան մոռացել էր նա, կարծես երկինքը փուլ էր եկել նրա  
գլխին ու ինքը ճնշվում էր ամօթի ծանր բեռի տակ:

Ամբողջ եօթն օր ու գիշեր, նա իւր սենեկից գուրս  
չէր գալիս, ոչ հաց էր մտաբերում ու ոչ ջուր. այլ ծանր  
հիւանդի նման պարկած տեղում տքում ու վոչում էր և  
անվերջ մտածում Ղըռաթի մասին:—Ո՛հ, Աստուած իմ,

ասում էր ինքն իրան, երբ պէտքէ բարձուի այս ծանրու-  
թիւնն իմ վերալից, երբ պէտքէ բեկուած սիրտս մի քիչ  
ամոքուի, որ ես շուտափոլթ հասնեմ Սիլիստրալ, Հասան  
փաշայի տունն ու տեղը տակն ու վրայ անեմ, նրա զօրքն  
ու զօրավարները գերեվարեմ, իսկ այն ապերախտ Քեալ  
օղանին փողոտեմ ու իմ աննման Ղըռաթը գերութիւնից  
ազատեմ... Այսպիսի տագնապի մէջ էր Քեօռօղլին, երբ Ալվազը  
կամաց գուռը բաց անելով ներս մտաւ:

Սթափուեց Քեօռօղլին ոտնաձայն լսելուց և իւր ալրա-  
կան դէմքը դարձնելով դրան կողմը, տեսաւ Ալվազին դրան  
մօտ կանգնած. սիրալիր կերպով իսկոյն հարցրեց.— «Բնչ կայ,  
սիրելի Ալվազ ինչ ունիս ասելու»:

— Զեր ողջութիւնը կը խնդրեմ, համեստօրէն պատաս-  
խանեց Ալվազը:

— Զը լինի բան ունես ասելու, կրկնեց Քեօռօղլին:

— Այն, տէր իմ, մի կարևոր բանի համար եմ եկել, եթէ  
շնորհ անէք իմ մի քանի խօսքը լսելու:

— Ինչ որ ունիք, խնդրեմ համարձակ ասէք:

— Մենք արդէն խորհուրդ ենք արել, սկսեց Ալվազը,  
որ մի փոքր խումբ, մօտ 1000 հոգի, մնա ալստեղ ամրոցը  
պաշտպանելու, իսկ մնացածներս 6000 մարդով գնանք Սի-  
լիստրալ, թէ մեր գերի ընկած Ղըռաթը բերելու և թէ Հա-  
սան փաշային ցոյց տալու, թէ որոնց հետ գործ ունի ..

— Ո՛չ, ո՛չ, հոգեակդ իմ, ընդհատեց Ալվազի խօսքը  
Քեօռօղլին, այդ միայն իմ պարտականութիւնն է, ես ինքս  
անձամբ կերթած և իմ անելիքը կանեմ, որովհետեւ ես քան-  
դել եմ, ես էլ պէտքէ շինեմ: Միայն գու գնա մի ձեռք  
գէրվիշական շորեր պատրաստել տուր, որ ես հագնեմ ու  
միայնակ ճանապարհ ընկնեմ գնամ իբրև երգիչ:

Ալվազը անմիջապէս գուրս գնաց, պատրաստել տուեց  
նրա պատուիրած շորերը, որ Քեօռօղլին հագնելով, ծպտեալ

պիտի ներկայանար, իբրև երգիչ—դէրվիշ, Հասան փաշալին։  
Իւր նպատակին հասնելու համար միայն այս միջոցնէր ընտրել։

Ըռաւոտը վաղ լուսաբացին Քեօռօղլին իւր նախաճաշիկն արած դուրս եկաւ տանից, հագաւ դէրվիշական շորերը, սազը ուսից քարշ արաւ, ամրոցի կառավարութիւնը յանձնեց Ալվազին և յետոյ բոլորին մնաք բարեաւ ասելով. ճանապարհ ընկաւ դէպի Սիլիստրայ, ուր գերի էր տարած հազարիւա Ղըռաթը։

Գարնանալին զով առաւոտներից մէկն էր. բնութիւնը ուրախ ծիծաղում էր մարդկանց երեսն իվալը, դաշտ ու ձոր ծածկուել էր կանաչ թաւիշով, բիւրաւոր ծաղկանց անուշահոտ բուրմունքներից ծանրացած օդը լցուել էր երգող թռչնոց անուշիկ դալլալիկներով։ Սոխակը վարդենեաց միջից, ուրախ հըճուանքով, սկսել էր իւր սուլոցը, իսկ նրա դասակից արտուտը օդում ձայնակցում էր նրան իւր մեղեդիներով. միայն Քեօռօղլին էր, որ չէր մասնակցում բնութեան մէջ կաաարուած այդ ընդհանուր համերգին։ Ոչ մի գեղեցկութիւն, ոչ մի բերկրութիւն չէր կարող նրա սիրտը ուրախացնել. նա տրտում էր ու տիսուր, նրա բորբոքուած երեակայութեան մէջ պատկերանում էին վերացական սոսկալի տանջանքներ։

Ալսպիսի մաայուզութեան մէջ գնացած ժամանակ, յանկարծ նրա առջև բացուեց մի ահռելի վիճ, որ վիշապի նման բերանը բաց արած, պատրաստ էր կլանել ամեն մի հանդիպողին։ Բոպէաբար նա սթափուելով իւր մտալուզութիւնից, ուշքի եկաւ և ինչ է տեսնում, եթէ մի քանի քալ ևս, ինչպէս անգիտակցաբար առաջ էր գնում, շարունակէր իւր այդ գնացքը, պէտքէ գլխովին անդարձ յաւիտենականութեան գահավէժը խորասուզուէր։ Ալդտեղ կանգնեց, աչքերը շինով մի խոր հոգոց քաշեց և սրտի խորքերից մըմնջաց ինքն իրան. — „Ես էս ուր եմ գնում Աստուած իմ։“ Վիհը

սոսկալի էր, նրա յատակը չէր երեռում, յալտնի ճանապարհ չկաը իջնելու, միմիայն նշմարվում էր օձապտոյտ մի ինչ որ նեղ շաւիդ, Ալդտեղ դարձեալ սազը առաջ բերեց, որ էր սրտի միակ միխթարանքն էր ու սկսեց յուզուած և բորբոքուած սրտով երգել. —

Հը գիտեմ ինձ ուր է տանում  
Վիճակս, Տէր իմ, ով Տէր իմ,  
Թխպոտ ամպերը ծածկեցին  
Լուսնեակս, Տէր իմ, ով Տէր իմ։

Անբաղդութիւնն ինձ վիճակուեց,  
Բաղդիս բաց գոները փակուեց,  
Ո՞հ, իմ տեղակ ով ճաշակեց  
Բաժակս, Տէր իմ, ով Տէր իմ։

Քեօռօղլիս օտար եմ, քանի,  
Ոչ մեռած եմ, ոչ կենդանի,  
Երբ մեռանիմ, ով պիտ տանի  
Դիակս, Տէր իմ, ով Տէր իմ։

Երգը վերջացրուց, աչքերը բարձրացրեց դէպ երկինք, իսրէ խնդրելով ամենաբարձրեալի անսահման գութն ու խնամքը։

Ալդ ժամանակ արեգակն արդէն կանգնել էր միջօրեալ հորիզոնի կենդրոնում, քաղցն ու ծարաւը սկսել էին իրանց ազդեցութիւնն անել՝ ստամոքսը իւր պաշարն էր պահանջում։

Հսկալ Քեօռօղլուն թէպէտ և շատ ախորժելի էր, փոքր ինչ հանգստանալ գետակի եզերքում, որ մանրիկ կարկաչով սահսրւ էր ձորակի միջով և ճանապարհի չարքաշութիւնից համարեա թէ ուժապատ ծնկները ծալվում էին. բայց դիւցազնը անվճռականութեան մէջ տարակուսած, առ ժամանակ

անձարացած մնաց իւր տեղը և սակաւ ինչ հանգստանալուց  
ու հաց ուտելուց և անձը կազդուրելուց յետոյ՝ սկսեց նորից  
շարունակել իւր ճանապարհը:

Այդ նեղանցք վիշն իջնելն էր դժուար, որովհետեւ  
օձապտոյտ նեղ շաւիղը բոլորովին անհամապատասխան էր  
մեր հսկալի մարմնի գիրութեանը, բայց Բնչ արած, ինչ էլ  
որ լինէր, պիտի գնար: Խսկոյն վերկացաւ տեղից, մտաւ նեղ  
անցքը և խիստ զգուշութեամբ շարունակեց իջնել դէպի  
անդունդը: Ճանապարհի դեռ քառորդ մասը չէր անցել, որ  
ահա ոտքը սալթաքեց ու այնպէս վայր ընկաւ քամակի վե-  
րալ, որ ուսից քարշ ընկած սազը ջարդ ու փշուր եղաւ:

— Այս Բնչ անբաղդութիւն է, Տէր Աստուած, ասաց  
ինքն իրան և տեղից վերկենալով մնաց շուարած:

Վերջապէս բարկութիւնից սրտի բորբոքն ու զալրութը  
թափեց այն քարի վերայ, որ խոչնդու էր եղել իւր ճանա-  
պարհին: Ատամները սեղմելով վերուց այն կոպիտ քարը, որ  
երկու զոյտ գոմէշ հաղիւ թէ կարողանալին տեղից շարժել,  
շպըրտեց դէպի անդունդը, որ շառաչմամբ ընկաւ գետակի  
մէջ տեղը և մի այնպիսի շըփլթոց հանեց, որ շրջակալքը  
արձագանք տուին, մինչև անգամ վայրի կենդանիներն այդ  
սարսափ աղդող արձագանքից սոսկալով, սկսեցին գարշելի  
ձալներով ոռնալ:

Այդ զաւեշտական փոքրիկ միջադէպից մի կերպ քաւա-  
կանութիւն առած, արիւնալի աչքերը պարզուեցին և սիրտը  
հանգստացաւ: — Էլ ուրիշ հնար չկայ, ասաց, պէտքէ խո-  
նարհուել ճակատագրի առաջ: Այսպէս փնթփնթալով հա-  
ւաքեց սազի ջարդուած կտօրները փաթաթեց թաշկինակի  
մէջ, սեղմեց թերի տակը ու այնպէս տխուր դարձեալ շարու-  
նակեց իւր ճանապարհը:

Թէ Բնչ անպատմելի դժուարութիւնով դուրս եկաւ ալդ  
առապար անդնդախոր վհից, այդ միայն Աստուած դիմէ,

յանկարծ նրա հանդէպ երևաց մի փոքրիկ գիւղաքաղաք, որի  
գեղեցկաշէն տները զարդարուած էին ծառաստաններով. այն-  
պէս որ հեռուից տեսնողը նրան նմանեցնում էր մի մոգա-  
կան անտառակի կամ բուսաբանական այգու:

Քեօռօղլին շատ ուրախացաւ. մտածելով որ ալդտեղ  
անպատճառ մի վարպետ կը լինի, որ իրայ սազը նորոգէ: Երկար չը տեսեց, որ մեր ծպտեալ գէրվիշը արդէն լիշեալ  
գիւղաքալաքումն էր: Բայց նա օտար էր, ամեն բան նրան  
անձանօթ էր, շուկալում ման գալիս, հետաքրքիր նայում էր  
այս ու այն կողմ ուր արհեստաւորներն էին բանում: Մէկ  
էլ նրա աչքովն ընկաւ մի վարպետ և նրա մօտ ծալապատիկ  
նստած մի գեղեցկադէմ պատանի, նոյն արհեստաւորը կարծես-  
թէ հետաքրքրութեամբ մի ինչ որ բան էր փնտռում:

Քեօռօղլին լուսալիր մօտեցաւ վարպետին, քաղաքավարի  
բարեեց ու նստաւ: Ծոցից հանելով կոտրտուած սազի կտոր-  
ները առւեց վարպետին ու խնդրեց, որ որքան կարելի է  
շուտ շինէ, որովհետեւ ինքը այն օրը ճանապարհորդ էր:

Վարպետը լանձնառու չեղաւ շինելու, որովհետեւ ուրիշ  
պատռւէրներ շատ ունիմ շինելու ասաց. նրանք հազիւ կա-  
րող եմ պատրաստել որոշեալ ժամանակին, իսկ եթէ կը բա-  
րեհաճիք, թող ձեր սազը մնալ ինձ մօտ և քառասուն օրից  
յետոյ, կգաք կը տանէք:

Քեօռօղլին սկսեց աղաչել-պաղատել և աւելացրեց թէ,  
“Ես մի թշուառ ճանապարհորդ եմ, ուրեմն խնդրում եմ  
որ, նախ իմ սազը շինէք, որ ես ճանապարհից յետ չը մնամ,  
որովհետեւ այն նպատակը, որի յետեկից որ ես գնում եմ, իմ  
ուշանալով կարող է բոլոր ծրագիրներս փչանալ”:

Այդ խօսքերը թէ քարին ասած թէ նրան, ալդ մի և  
նոյն էր, որովհետեւ վարպետը բոլորովին ուշադրութիւն չը  
դարձրեց նրա խօսքերին:

Քեօռօղլին տեսաւ որ վարպետը շատ պինդ ու լամառ.

Գլուխ մարդ է և ամենեին իրայ խօսքերին ուշադրութիւն չի դարձնում, իւր աղաչանքները բոլորովին ազգեցութիւն չարին նրա սրտի ու զգացմունքի վերալ՝ վեր առաւ այնտեղ դժնուած պատրաստի սազերից մէկը ու սկսեց երգով աղաչել.

Չամլիբէլից քեզ լիշելով եկել եմ,  
Վարպետ չարդ տանեմ, շինիր իմ սազը,  
Սազս կոտրուել է, ես մոլորուել եմ,  
Վարպետ չարդ տանեմ, շինիր իմ սազը:

Բաղդն ինձանից իւր տուածը լետ խլեց,  
Հեռուն կանգնած ծափ տուեց ու ծիծաղից,  
Հարբած էի, ընկայ սազս կոտրուեց,  
Վարպետ չարդ տանեմ, շինիր իմ սազը:

Մատաղ լինիմ աշակերտիդ աչքերին,  
Որ նման է ճիշտ գեղեցիկ Յովսէփին,  
Սատափներով լաւ զարդարէ իմ սազին,  
Վարպետ չարդ տանեմ, շինիր իմ սազը:

Վարպետը դարձեալ ոչ մի խօսք չը խօսեց:

Քեօռօղլին տեսաւ որ յամառ վարպետը այդ տեսակ աղաչանքներով խղճահարուողը չէ ու իւր խօսքերը մնում են անլսելի, սաստիկ զայրացած ու խոռված երգեց հետևեալ կտորը. —

Քեօռօղլիս երբ սարը դուրս գամ անվախ եմ,  
Պատերազմի մէջը մերթ աջ, մերթ ձախ եմ,  
Այս շաշիառով գլուխիդ կը ջախջախեմ,  
Վարպետ քեզ եմ ասում. շինիր իմ սազը:

Վարպետը երբ լսեց վերջին սպառնալից խօսքերը և մանաւանդ Քեօռօղլու անունը, շատ վախեցաւ: Իսկոյն վայր

դրեց ձեռքի գործը և շտապով ձեռնարկեց շինել Քեօռօղլու սազը ու յանձնեց իրան:

Քեօռօղլին երկու ոսկի տուեց վարպետին ու մի փոքր ուկի ոսկի էլ աշակերտին ու այնպէս դուրս գնաց:

Արագ քայլերով անցաւ միւս փողոցը, ուր կալին մի քանի խանութներ, ի թիւս որոց կար և մի փոքրիկ խանութ, ուր կերակուրներ էին պատրաստում: Քեօռօղլին ներս մտաւ այդտեղ, պատուիրեց որ ճաշ տան իրան և ինքը անցաւ վարագոյրի միւս կողմը:

Խոհարարը սովորական կերպով լցրեց մի փոքրիկ աման կերակուր ու ներս տարաւ:

Քեօռօղլին ժպտալով ասաց. — «Ես մենակ չեմ, սիրելիս, հիմա ուր որ է՝ իմ ընկերները կգան. աւելի լաւ է ամբողջ կաթսան բերես ալստեղ, ի հարկէ ինչ որ ձեր վարձն է դուք լիովին կտանաք»:

Խոհարարը իսկոյն կատարեց նրա պատուէրը:

Քեօռօղլին մի քանի զոյտ հացով ամբողջ կերակուրը մաքրագարդեց և ընկողմնեց հանգստանալու: Իսկ խոհարարը գուանը կանգնած սպասում էր նրա ընկերներին. բայց ոչ ոք չերեաց: Երկար սպասելուց լետոյ՝ դարձաւ Քեօռօղլու մօտ ու ասաց. — „Բաբայ գէրվիշ, շատ սպասեցի, բայց ոչ ոք ձեր ընկերներից չի երևում”:

— Ոչինչ, պատասխանեց Քեօռօղլին, յետի գալողը վազկան կը լինի: Բայց դու էն ասա, էլ ինչ ունիս ուտելու:

Խոհարարը մօտեցաւ կաթսալին ու տեսաւ որ դատարկ է, զարմացաւ մնաց, նա այնպէս էր կարծում թէ գետին է թափուել, նայեց չորս կողմը և ոչինչ չը նկատեց: Ապա զարմացած հարցրեց — «ո՞վ կերաւ ալդքան կերակուրը»:

— Ա.լ, սրանք, լրջօրէն պատասխանեց Քեօռօղլին:

— Սրանք ովքեր են, որ ես ոչինչ չեմ տեսնում, ասաց խոհարարը, աւելի զարմացած:

— Եւ չըպիտի էլ տեսնես, կրկին պատասխանեց Քեօռօղլին:

— Որովհետև սրանք «Հախ»<sup>1)</sup> դէրվիշներ են, փընթ-  
փընթաց ինքն իրան խոհարարը, ուրեմն մեզ նման հասա-  
րակ մահկանացուները չեն կարող տեսնել... Է, շատ լաւ,  
ուրեմն ինչ էք ուզում կամ ինչ կերակուր կամենում:

— Մենք ճանապարհորդ մարդիք ենք ասաց Քեօռօղլին,  
ինչ որ պատրաստի ունիք, այն բերէք:

— Առ այժմ մի կաթսայ մսեղէն կերակուր և մի կաթ-  
սայ էլ իւղալի փլաւ ունինք, ասաց խոհարարը:

— Եհ, ինչ անենք, ալսօր էլ դրանցով կը բաւականա-  
նանք, նորից կրկնեց Քեօռօղլին ու հրամայեց եղածը բերել:

Խոհարարը մի ակնթարթում երկու կաթսան էլ միասին  
բերեց դրեց նրա մօտ ու ինքը դուրս գնաց:

Քեօռօղլին պատմական Շարալի նման անյագաբար այդ  
երկու կաթսայ կերակուրն էլ կերաւ, զեր կացաւ կանչեց  
խոհարարին, նրա հաշիւը տուեց ու դուրս գալով այդ դիւ-  
զաքաղաքից, ուղևորուեց դէպի իւր նպատակատեղին—  
Սիլիստրայ:

Երբ հասաւ քաղաքի դրան մօտ, տեսաւ որ այնտեղ մի  
ծերունի էր նստած, և այդ ծերունին Հասան փաշալի ձեռ-  
նասուններից էր. Աչքի տակով նկատեց և տեսաւ որ եկողի  
երգիչ է, ինքն իրան մի ինչ որ բան փընթփրնթաց քթի  
տակին և գլուխը քաշ գցեց:

Ծպտեալ դէրվիշը բարեւ տուեց ծերունուն, բայց ծե-  
րուկը ոչ գլուխը վեր բարձրացրեց և ոչ էլ բարեն առաւ:  
Որովհետև շատ երգիչներ եկել էին Հասան փաշալի բերել  
տուած՝ Ալուաթը գովաբանելու, բայց ոչ ոք չէր կարողացել  
Ալուաթին տրժանավայել գովասանք տալ: Հէնց այդ պատ-

<sup>1)</sup> Հախ դէրվիշ կոչվում են մահմեղական կախարդ հո-  
գեորականները, որոնք հմայել. դիւթել, կախարդել ու ալլ  
և ալլ բժժանքներ անել դիաեն:

ճառով էլ ծերուկը չառաւ դէրվիշի բարեւ, կարծելով թէ  
դա էլ նրանց նման հասարակ երգիչներից մէկն է:

Քեօռօղլին կրկնեց իւր բարեւ, բայց դարձեալ անպա-  
տասխան մնաց:

Թէպէտ Քեօռօղլին այս անդամ շատ առնուեց ծերունու  
այդ տեսակ սառը վարմունքից, բայց և այնպէս սրտի վրդով-  
մունքը զսպելով, նստաւ ծերունու մօտ և սազը շապկահան  
անելով երգեց.—

Բարեւ տուի, բարեւ չառաւ,  
Ցնծալ սիրտ իմ, ինչ տխուր ես,  
Երջանն այսպէս չի մնայ բնաւ,  
Ցնծալ սիրտ իմ, ինչ տխուր ես:

Մարդիք ունին մի նեղ շրջան,  
Ոչինչ բան չկայ սեփական,  
Գանձն է ձեռաց կեղտ իսկական,  
Ցնծալ սիրտ իմ, ինչ տխուր ես:

Քաջ Քեօռօղլիս տկարացայ,  
Օրըստօրէ անճարացայ,  
Դարվիշութեան յօժարացայ,  
Ցնծալ սիրտ իմ, ինչ տխուր ես:

Երբ երգը վերջացրուց, ծերունին կարծես արթնացաւ  
խոր քնից, աչքերը շուռ տալով դէպի երգիչը, ուրախ ժպիտն  
երեսին ասաց.—«Կեցցես, բաբաւ դէրվիշ, բայց ներիր որ իմ  
կարծիքը բոլորովին սխալ է եղել ձեր մասին: Ձեր այդ մի  
քանի խօսքերը ինձ համոզեցին, որ դուք բացառութիւն էք  
կազմում միւս շրջիկ երգիչներից, որոնք քեզանից առաջ  
ներկայացել էին Հասան փաշալին: Ես այժմ համոզուած եմ  
որ դուք կարող էք Հասան փաշալի ձին արժանաւոր կեր-

պով գովաբանել ու ստանալ ձեր լիաբուռն պարգև. Այս էլ կասեմ, աւելացրեց, եթէ դուք մի շողոքորթական երգ ևս յօրինէք ու նուիրէք իսկապէս Ղըռաթի անուանը, անշուշտ կստանաք չասան փաշայից աւելի շնորհ ու նշանաւոր վարձատրութիւն. նրա հետ նաև մեծ համբաւ:

Քեօողլին այդ խրախուսական խօսքերից ու լորդորներից քաջալերուած, սկսեց իւր խելքին զօռ տալով. անպատճառից լորինած երդը ծերունու բժացած ականջներում կըկին նուագել.—

Սիրուն դըռաթ, կայտառ դըռաթ,  
Քոյ յարգդ ճանաշողներ կան,  
Հասան փաշայի զօրքի մէջ,  
Քեզ վայել կերակրողներ կան:

Ոնիս յայտնի գովաբանող,  
Յատկութիւնդ նուրբ հասկացող,  
Աչքերդ շոյող համբուրող,  
Պարանոցիդ փարողներ կան:

Ղըռաթ, թեզ նստեմ քաջարար,  
Ոլորեմ պեխերս երկար,  
Ազ ձեռքս սուր, ձախս ասպար,  
Զարդեմ թէ չար ոսոխներ կան:

Այս երգն էլ որ լսեց ծերունին, ևս առաւել համոզուեց, որ գերվիշը լաւ երգիչ է: Մի քանի քաջալերական խօսք ևս շուալլելուց յետով, աւելացրեց.— “Ես ձեզ արժան չեմ տեսնում որ դուք միւս շրջիկ երգիչների նման գնաք սրճարաններում երգէք և ձեր ընտիր երգերով զբաղեցնէք այն տգէտ ամբոխին, որ իսկապէս չարժէ լսել ձեր իմաստալից խօսքերը. այլ որպէս փորձուած մարդ, ես ձեզ խորհուրդ-

կտամ, որ ուղղակի գնաք չասան փաշայի բնակարանը, որի դրան առջև մի գեղեցիկ մարմարեայ քարէ նստարան կայ (բինէք տաշի) նրա վրայ լուռ ու մունջ նստէք: Նրանք ըստ տեղական սովորութեան իսկոյն կը հասկանան, որ դուք մի կարեսը գործի համար էք այնտեղ գնացել, այն ժամանակ Քեահա բէկին ձեզ կը ներկայացնէ փաշային և դուք կարող էք այնտեղ բացատրել ձեր միտքը: Միայն լաւ գիտցէք, որ ես այս խորհուրդը տալիս եմ ձեզ նրա համար, որ ձեր բարձր պատիւը, շատերի նման. չը թեթեանալ, թէ չասան փաշայի, թէ շրջապատողների, և թէ մանաւանդ հասարակութեան առաջ, որ յետոյ ամեն բան յայտնուի:

Երբ ծերունին աւարտեց իւր այս համառօտ ատենաբանութիւնը, ծպտեալ գերվիշը ոտքի կանգնեց և շնորհակալութիւն լայտնելով ծերունուն, ներս մտաւ քաղաքի դըռնից իրան բոլորովին անծանօթ Միլիստրայ քաղաքը, որտեղ այժմ գերի էր ընկել Ղըռաթը:

Նա անցնում էր երկար ու նեղ փողոցներով, անցնում էր բարձր ու ցած աների և խանութների առջևեց. բայց բանը նրանումն էր, որ այն կորովի առիւծը երկչունապատակի նման մինչև անգամ ինքն իրայ ստուերից էլ էր վախենում, որ մի գուցէ այդտեղ իրան ճանաչող մէկը լինի ու մատնէ իւր ծածկուած խարդախութիւնը, և այնուհետեւ այլ ևս բոլորովին չը կարողանայ հասնել իւր նպատակին:

Ալսպիսի խառնաշփոթ մտքերով տոգորուած, և արագ քայլերով երբ չափում էր անծանօթ փողոցները, յանկարծ բացուեց նրա առաջ մի հոյակապ շինութիւն, որ շինուած էր յատուկ տաճկական ճարտարապետութեամբ քաղաքի կենդրոնում: Նա իւր հրաշալի քանդակներով և սեթեթեալ պերճ պաճուճանքներով, բոլոր շինութիւնների մէջ առաջին տեղն էր բռնում: Իսկ նրա առաջի ընդարձակ հրապարակն

ու իրան կից բազմացեղ սաղարթախիտ ծառներով զարդարուած պարտէզը, մի առանձին գեղեցկութիւն ու վեհութիւն էին տուել շինութեանը:

Այդ պալատանման շինութիւնը Հասան փաշալի բնակարանն էր:

Դէրվիշը գեռ մի երկու պտոյտ չարած հրապարակում, երբ ապուշ կթած նայում էր, յանկարծ նրա աչքովն ընկաւ ծերունու ասած մարմարեայ նստարանը: Էլ ժամանակ չը կորցրեց, անմիջապէս մօտեցաւ նրան և լուռ ու մունջ նստեց այդ խնամխօսական քարի վերալիքապարակում խոնուող ամբոխի ուշադրութիւնը ըոպէաբար դարձրուց իւր վերալ. բոլորը միասին աչքերը յառած նայում էին յաղթանդամ դէրվիշին: Իսկ դէրվիշը բոլորովին անտարբեր նստած էր, այնպէս որ իրանով հետաքրքրուող մարդիք կարծես թէ, ոչ այլ ինչ են, եթէ ոչ՝ անշունչ առարկաներ:

Հենց այդ միջոցին Հասան փաշալի բնակարանից դուրս եկաւ իւր ասան ընդհանուր կառավարիչ Քեահեա բէկին, որ պաշտօնապէս գնացել էր քաղաքի մէջ պատահած նախընթաց օրուայ անցքերը հաղորդելու փաշալին: Այդ միջոցին տեսաւ որ մի մեծամարմին դէրվիշ ծանր ու մեծ նստած է խնամխօսական քարի վերալ, որի աջ ձեռքում դաւրիշական տապարըն էր բռնած, իսկ ձախում մի բարակ ոսկեայ շղթալ, որի ներքեւ ծայրերը ամրացրած էր անփութ փալտից շինուած նշանեւ գեղեցիկ գանձանակին:

Բայց ուսից քարշընկած նախշուն սազը իսկոյն մատնում էր նրան, որ դաւրիշը աշուղական արհեստին էլ է ծանօթ:

Քեահա բէկին իսկոյն հասկացաւ, որ սա էլ եկել է Հասան փաշալի Նըռաթին գովաբանելու:

Նրա հագուստը իսկ դաւրիշական էր. և նրա սրածայր քոլոզի տակից ականջների ետևով քարշ էին ընկել թխագոյն երկար ճալվերը: Լայնադիր ճակատի վերալի կամարաձև թաւ

ունքերի տակ սեռուակ խոշոր աչքերը խլվում էին բնի մէջ, որոնց սուր հայեացքը սլաքի նման ցցվում էր նայողի սրտում: Կարմրացայտ այտերը, հսկալական քիթը, երկար պեխերը և բարձր հասակը քաջութեան տիպ էին ներկայացնում, Այդ առնական պատկերը սքողուած էր դաւրիշական գծուծ հագուստի տակ, որ միանգամայն կատարեալ տիպ էր ներկայացնում:

Քեահա բէկին մօտենալով նրան, մտերմաբար ասաց, — „Աստուած պահէ ձեզ, դաւրիշը բարալ, ձեր գալուստը բարի լինի»,

— „Աստուած կեանքդ օրհնէ“ կարճ ողատ սսխանեց դէվրիշը:

— Ի՞նչ էք կամենում, ծերունի հայր, ասաց Քեահա բէկին:

— Ոչինչ, ձեր ողջութիւնը: Վսեմափայլ Հասան փաշալի քարի համբաւն ու ժողովրդի վերալ ունեցած հոգոն ու խնամքը լսելով, որ արդէն հոչակուել է ամեն տեղ, այդ պատճառով ես էլ եկել եմ նրա մեծահոչակ անունը գովաքանելու և կեանքն օրհնելով՝ մտցնել իշշատակարանիս մէջ:

Քեահա բէկին լսելով այս հանճարեղ խօսքերը, որոնք լաւ տպաւորութիւն արին նրա սրտի վերալ, հարկադրուեցաւ հածոյանալու համար նրան ներկայացնել Հասան փաշալին:

Նոյն ժամայն Քեահա բէկին դաւրիշին ն բկայացրեց փաշալին և մի քանի խօսքով հասկացրեց նրա ինչպիսի մարդ լինելը:

Հասան փաշան շատ ուրախացաւ. մանաւանդ երբ տեսաւ նրա ուսից քարշ ընկած սազը:

Սովորական հարց ու բարեկից յետոյ, մատուցուեցաւ նրանց հոտաւէտ սուրճ ու համել գրգլալ՝ Երկար խօսակցութեան մէջ պարզաբանուեց, որ դաւրիշը իսկապէս եկել է Հասան փաշալի բերել տուած ձին գովաբանելու:

Քեահա բէկին ներկայ լինելով Հասան փաշալի և դաւ-  
րիշի խօսակցութիւններին, միջամտեց որ դաւրիշը փոքր ինչ  
նուազէ ու երգէ:

Հասան փաշան շատ ուրախացաւ Քեահա բէկի այս առա-  
ջարկութեան վերալ:

Դաւրիշը նկատելով նրանց փոխանակած ակնարկները,  
իսկոյն ուսից վեր առաւ սազը ու սկսեց երգել.—

Կարմրերանգ ձին նստելը աջող է,  
Սիրտս այն նժոյգի կարօտով մնաց.  
Խրխնջալով դաշտ ու լեռներ տրորէ,  
Սիրտս այն նժոյգի կարօտով մնաց:

Փռնչալով նա մեծաքալ կը թռնի,  
Սուր ականջներն գլխի վերայ կը ցըցուի,  
Ծերանալ էլ մեծ գումարով մարդ կառնի,  
Սիրտս այն նժոյգի կարօտով մնաց:

Դէրգիշ իւրուշանն եմ անշահ գեգերիմ,  
Լաւերին բարեկամ, չարեաց ոխերիմ,  
Խրխինջ ուրախ, հռոոց լսել կը տքնիմ,  
Սիրտս այն նժոյգի կարօտով մնաց:

Երգը որ աւարտեց, Հասան փաշան ու շրջապատողները  
մէկ մէկու ակնարկեցին ու միմեանց ականջից փսփսալով  
ասացին, սա ուրիշների նման չէ, սա երեսում է որ անհատ  
է, սրա մէջ գիտութեան պաշար կայ թագնուած, տեսնում  
էք բոլորը անպատճառի խօսքեր էին և ինչ աստիճանի  
սահուն ու կոկ դուրս էր թռչում բերանից: Բառերն այն-  
պէս խնամքով էր դասաւորում, որ կարծես օր առաջ պատ-  
րաստուած ու խմբագրուած լինէր: Վերջ ամենայնի սրա  
բանաստեղծական տաղանդի մէջ շնորհք է փայլում, բայց

բանը նրանումն էր, որ նա փոխանակ Ղըռաթը գովաբա-  
նելու, գովաբանեց Տոռաթը:

Ներկալ եղողներից մի քանիսը ասացին.—«յարգելի  
դաւրիշ, Հասան փաշալի ունեցած անթիքան սպիտակ է, ոչ  
թէ կարմիր. եթէ կարելի է պիսակ ձին գովաբանեցէք:

Այդ միջոցին Համզան Հասան փաշալի ծաղկոցից դուրս  
եկաւ, անուշահոտ ծաղիկներից ու վարդերից փնջած մի գե-  
ղեցիկ փունջ ձեռին:

Երբ մտաւ այն հրապարակը, ուր կարգով նստած էին  
Հասան փաշալի համակրող մեծամեծներն ու պաշտօնեաները,  
ծաղկանց գեղեցիկ տեսքն ու անուշահոտ բուրմունքը նոյն  
բոպէին գրգռեց բոլոր հանդիսականների ուշադրութիւնը.  
բոլորը աչքերը յառեցին դէպի նա:

Այդ ժամանակ խորամանկ Համզալի հայեացքը գարձաւ  
դէպի ծպտեալ դաւրիշը, և նա իսկոյն ճանաչեց որ Քեօո-  
օղլին է. նոյնպէս և Քեօոօղլին էլ նրան ճանաչեց, բայց  
այնպէս անտարբեր և սառն անցկացաւ այդ անակնունելի  
հանդիպումն, որ հանդիսականներից ոչ ոք ոչինչ չը նկա-  
տեց, միայն երկուսն էլ շառագունեցին:

Քեօոօղլին այդպիսի դէպքերում որ աւելի փորձուած  
էր, այս միջնադէպի ժամանակ անվրդով տոկաց, բայց Համ-  
զան զգալի կերպով սարսափ զգաց երակներում:

Այդ ժամանակ Համզան իսկոյն մտաբերեց իւր արած  
ուխտը, որ արել էր ջրաղացի առաջ. հէնց այդ էր գլխա-  
ւոր պատճառը, որ բոլորովին անտես արաւ Քեօոօղլու ներ-  
կալութիւնը:

Համզալի բերած գեղեցիկ փնջով հետաքրքրուողները  
կարծես սթափուեցին ըոպէական ապշութիւնից ու խնդրեցին  
երգչին, որ շարունակէ իւր գովասանական երգը՝ Ղըռաթի  
մասին. և հետևապէս խնդրեցին, որ կէտ առ կէտ նկարա-  
գրէ նրա գեղեցկութիւնը և ունեցած յատկութիւնները:

Ամենայն ուրախութեամբ, պատասխանեց երգիչը, միայն  
այն պայմանով, որ եթէ ձին դուրս կը բերէք իմ առջեւ որ  
աչքովս տեսնեմ ու այնպէս գովաբանեմ:

Բոլորը յարգեցին ու հաւանեցին նրա առաջարկութեանը:  
Հասան փաշան իսկոյն հրամայեց, որ Նըռաթը դուրս  
քաշեն ախոռից ու բերեն հրապարակ:

Այդ պաշտօնը միայն Համզին էր վերապահուած, որով-  
հետեւ ձիապաններից ոչ ոք չէր կարող մօտենալ Նըռաթին:

Համզան իսկոյն իւր ձեռքի անուշահոտ փունջը յանձ-  
նեց Քեահա բէկին ու ինքը ուղղուեց դէսի ախոռը, ուր  
առանձին խնամքով պահվում էր Նըռաթը: Ճարպիկ Համ-  
զան կարճ միջոցում Նըռաթը թամքած ու սանձած դուրս  
բերեց հրապարակ: Նրա կուրծքը զարդարուած էր ոսկեզօծ  
արծաթավատ թալիսմաններով, թաւշեալ փափուկ թամքի,  
ոսկեհուռ ճակատի (զաշի) մէջ տեղը զետեղուած էր մի խո-  
շոր ագամանդ, որի անհամար ցոլքերն ու շառափղները  
խառնուելով արեգակի ճառագայթների հետ, շլացնում էին  
նայողի աչքերը: Նա այն աստիճան գեղեցիկ էր, որ եթէ  
պատկերահան Ապեղէսը մինչև անդամ մի ալդպիսի նկար  
անելու փորձ անէր, անշուշտ նրա ստեղծագործող հրաշալի  
վրձինը պէտքէ ծալուէր ու կորցնէր իւր ուղղութիւնը...:

Նըռաթը բոլոր հանդիսականների ուշադրութիւնը դար-  
ձուց իւր վրա:

Հասան փաշայի ուրախութեանը խօմ չափ ու սահման  
չկար և հազիւ թէ ծածկում էր իւր գժուելու չափ ուրա-  
խութիւնը, որ զգում էր նոյն բոպէին:

Իսկ Քեօռողլու սիրաը անշամարելի կերպով բարախում  
էր: Բայց նա կեանքի մէջ այնքան շփուել ու փորձուել էր,  
որ բոլորովին անտարբեր ձևացաւ. միայն աչքի տակով նա  
մերթ հանդիսականներին էր նայում և մերթ իւր Նըռա-  
թին ու երբեմնապէս այնպիսի խուլ հառաջանքներ և հո-

գոցներ էր արձակում սրտի խորքերից, որ տոշորվում էր:

Բոլորը լուռ էին ու անխօն. լանկարծ ալդ լռութիւնը  
խանգարեց Հասան փաշայի ձայնը, որ շողոքորթելով խնդրեց  
երգչեց, որ շարունակէ իւր ընդհատուած երգեցողութիւնը:

Երգիչը անմիջապէս սազը առաւ ձեռքը ու ներքին  
վրդովմունքով շարունակեց երգել.—

Մէկ ձի տեսալ Սիլիսորալ քաղաքում.

Ոշխուժավառ ու կրակոտ Նըռաթ, Եկ,  
Գելի ընկած մի զսեմ անձի ձեռ քում,  
Աշխուժավառ ու կրակոտ Նըռաթ, Եկ:

Բարձր է կազմուածքը, գլուխը փոքրիկ,  
Վեց կամ եօթն ամաց է, հասակը ծաղիկ,  
Շահն էլ չունի սրա նման գեղեցիկ,  
Աշխուժավառ ու կրակոտ Նըռաթ, Եկ:

Որոնելով հազիւ գտալ հետքերդ,  
Բեր համբուրեմ սմբակներդ, աչքերդ,  
Իւրուշանս տեսալ սիրուն պատկերդ,  
Աշխուժավառ ու կրակոտ Նըռաթ, Եկ:

Այս երգը ամենքին գուր եկաւ. բոլորը միաբերան զո-  
վեցին երգչին, բացի Քեահա բէկից, որ կարծես թէ մի ինչ  
որ խարդախութիւն էր նշամբառում երգչի հայեացքների, շարժ-  
ման ու երգեցողութեան մէջ:

Հասան փաշան միամիտ էր. միամիտ էին նաև նրա  
շրջապատողները: Նա երգչին աւելի աշխուժի բերելու հա-  
մար, հրամայեց նստել Նըռաթին ու այնպէս գովաբանել:

Ծպտեալ երգիչը մերժողական ձեւ տալով իւր խօսքին,  
ասաց. — ծշմարիտն ասելով, վսեմաշուք տէր, ես վախենում  
եմ. միթէ կարելի է նստել ալդ հրեղէն ձիու վերայ... վերին

տեսչութեան աչքը վերան հովանի լինի. աչքովս տեսնում եմ որ դա երկնալին աստղերի հետ է խաղում, ես իբրև ան փորձ մարդ, բնչպէս կարող եմ նստել դրա վերալ. կարող է պատահիլ, որ ինձ անմիջապէս տափին տայ ու վերջացնէ իմ հաշիւը այս աշխարհից և իմ անունը գրել տայ մահուան սև տարեգրութեան մէջ:

—Ոչինչ չի լինի, կրկնեց Հասան փաշան, բոլորովին մի վախենար: Սակայն փաշան այնքան սիրահարուած էր իւր ձիու վերալ, որ նրա միակ ցանկութիւնն էր, որ մարդիկ, բոլոր ժամանակը, խօսէին ու գովաբանէին իւր Ղըռաթին:

Փաշալի շատ ստիպելուց, վերջապէս երգիչը ստիպուած եղաւ ընդունել ու յարգել նրա առաջարկութիւնը, (թէպէտ իւր սրտովն էր) և Ղըռաթի վերայ նստած գովաբանել նրան:

Կասկածաւոր Քեահա բէկին, ծածուկ հրամայեց, որ քաղաքի դռները փակեն. մտածելով թէ՛ չը լինի որ լանկարծ փախչի ու անհետանալ այդ ծածկախորհուրդ մարդը, իւր հետ տանելով Ղըռաթին:

Սիլիստրալ քաղաքի երեք կողմը պարսպապատ էր, իսկ մի կողմն էլ շրջապատել էր հուչակաւոր Դօն գետը, որ մարդիք նաւակներով ու մակուկներով անցուղարձ էին անում մէկ ափից միւսը:

Քեահա բէկը իւր արած կարգադրութիւնով մասամբ ապահովաւ ու կարծես թէ կասկածանքից դուրս եկաւ:

Երգիչը երիտասարդի նման ոտքի կանգնեց, երկայն վերարկուի փէշերը ժողովելով փաթաթեց մէջքին, մի տեսակ թեթև ձեւ ստացաւ ու անհամբեր սպասում էր փաշալի կրկնակի հրաւէրին, որ ձին առաջ բերեն ու սանձը լանձնեն իրան:

Հասան փաշան հրամայեց ձին առաջ քաշել: Համզան իսկոյն կատարեց փաշալի հրամանը ու սանձը պարզեց Քեօռօղլուն և հաղիւ լսելի ձայնով ասաց. — Ընդունեցէք, տէր

իմ, ահա ես իմ խոստումն ու պարտքը կատարում եմ, ինչ որ խոստացալ ջաղացի մօտ, մանաւանդ խնդրում եմ որ ներողամիտ լինիք դէպի ձեր ապերախտ ծառան»:

Քեօռօղլին համարեա անուշադիր թողեց ծառալի խօսքերը և սանձը գցեց Ղըռաթի գլուխն ու երկար բաշից բռնած, ծտի նման թռաւ նրա քամակը, ինքն իրան մի լաւ տեղաւորեց, ձին մի երկու անգամ չափ գցեց, գնաց եկաւ, կրկին կանգնեց հրապարակի մէջ տեղը, հանդիսականների առաջ:

Քեօռօղլին այն ըոպէին հասաւ իւր նպատակին, երբ Ղըռաթի սանձը ձեռքն անցաւ, այնուհետև ինչ որ ասելու ու խօսելու էր, դա համարեա մի ձեւական բան էր: Բայց և այնպէս, նրանց սիրտը շահելու համար, վերառաւ սազն ու սկսեց եռանդու երգել. —

Իմ թանկագին սիրուն Ղըռաթ,  
Մեզ մի մէլդան է հարկաւոր,  
Այնուհետև բիւր թշնամիք,  
Դէմ յանդիման է հարկաւոր:

Ոտքերդ դոփէ քաջաբար,  
Թշնամիքն արա ոտնահար,  
Քեզ նստողը ոչ թէ տկար,  
Այլ քաջազան է հարկաւոր:

Քեօռօղլիս երկար ժամանակ,  
Ընկալ վատ լեզուների տակ,  
Երբոր գտայ քեզ, իմ հոգեակ,  
Ինձ էլ բնչ բան է հարկաւոր:

Այս անսպասելի ըոպէին բոլորը լուռ ու մունջ նստած,  
Երգը լրջօրէն լսում էին: Բայց երբ լսեցին Քեօռօղլի անունը,

ամենքը զարմացած, ապուշի նման անխօս նայում էին իրար երեսի: Բոլորը շփոթուեցին, վախն ու երկիւղը տիրեց նրանց. այն ըովէին հասկացուեց, որ դա իսկապէս Քեօռօղլին է:

Հասան փաշան խօմ իսպառ ձեռքից գնաց. հաւաստի գիտենալով, որ Ղըռաթը անդարձ պիտի տանի Քեօռօղլին ու իրան կիսամուրագ թողնի:

Ըլդքան բազմութեան մէջ միակ հեռատես ու տոկուն մարդը միմիայն Քեահա բէկին էր, որ իբր անտարբեր, բայց միևնույն ժամանակ զննողական հայեացքով նայում էր կատարուած անցքերին: Նստողներին պաշարած շփոթութիւնը բառնալու համար, սառնարիւն կերպով ասաց.—«շարունակիր, յարգելի վարպետ, շարունակիր քաղցրաբարբառ երգեցողութիւնդ»:

Քեօռօղլին մի խոշոր հայեացք ձգելով շուրջը նստողների վերակ, միանգամայն արհամարհելով ամեն տեսակ արկած ու վտանգ, սկսեց համարձակ ու անվախ կերպով երգել այս երգը.—

Զնաշխարհիկ ազնիւ Ղըռաթ,  
Թուշելով սլանաս կերթաս,  
Սիլիստրիալից, իմ գեղեցիկ,  
Սուրալով սլանաս կերթաս:

Մէկ հաշուելով մօտն ու հեռուն,  
Թէ ձմեռ լինի, թէ գարուն,  
Երբ մօտենաս պարզ ջրերուն,  
Խմելով սլանաս կերթաս:

Քեօռօղլիս չեմ եկել կոիւ,  
Միայն ունիմ փոքրիկ հաշիւ,  
Թշնամեաց գնդեր բազմաթիւ—  
ձեղքելով սլանաս կերթաս:

Այս վերջին խօսքերը աւելի խոր խոցեցին Հասան փաշալի սիրտը: Առաջին վէրքը դեռ կեղև չէր կապել, որ մի նոր վէրք ևս ստացաւ: Կամաց կամաց կարծես ոլժերը թուլանում էին և աչքերի լոյսը նուազում էր: Նա անշուշտ կաթուածահար գետին կը գլորուէր, եթէ կշին ամուր պատնէշի նման կանգնած չը լինէր Քեահա բէկին:

Այդ խելօք ու համբերատար մարդը հասկացաւ, որ արդէն բանը բանից անցկացաւ, այնուհետև այլ ևս գիւղին չէր հսկալի ձեռքից ձին յետ խելել. ուստի սկսեց ձեւականութեան համար ասել.—«Դոհ ենք քեզանից, սիրելի երգեց. շատ ու շատ գոհ ենք, որ դուք ձեր եռանդուն երգերով լիապէս բաւականութիւն տուիք մեզ բոլորիս: Ուրեմն խնդրում ենք ներողամիտ լինիք, որ մենք ձեզ այդքան նեղութիւն ու ձանձրով պատճառեցինք... Որովհետեւ տեսնում ենք, թէ դուք և թէ Ղըռաթը բաւականին չարչարուեցիք ու յոդնեցիք. ուզում եմ ասել, որ մի փոքր վայր իջնէք ձիուց, գաք նստէք մեզ մօտ, դեռ մի քիչ էլ ժամանակ անցկացնենք—ուրախանանք. որովհետեւ ձեր երգեցողութիւնը, իսկապէս ասած՝ շատ աննման ու դուրեկան էր»:

— Նատ լաւ էք հրամայում, ասաց երգիչը, միայն մի խնդիրք էլ ես ունիմ և յուսով եմ, որ դուք այնքան բարի ու մեծահոգի կլինիք, որ չէք մերժիլ իմ առաջարկն ու խնդիրը:

— Կարող էք, դէրվիշ բաբայ, կարող էք, խելացնորի նման ասաց յուսակուը Հասան փաշան:

— Իմ խնդիրը ոչ այլ ինչ է, եթէ ոչ, մի երկու խօսք. այն է, մինչև ալժմ ձեր սրտի ու կամքի համաձայն նուագեցի ու երգեցի... բայց կարծեմ, էֆէնտըմ, ձեզ լաւ յարտնի է, որ մարդիս եռանդն ու բանաստեղծութիւնը նման է փոքրիկ կալծի, որքան որ հովահարես, այնքան կը բորբոքի ու կը բոցավառուի... թէպէտ և ես այն տաղանգաւոր բա-

նաստեղների դասակարգից չեմ, բայց և այնպէս, կարծես  
թէ այսօր իմ եռանդն էլ է իւր խոր քնից զարթնել, իմ մէջ  
եռում է ու հանգիստ չի տալիս ինձ: Միմիալն չգիտեմ,  
արդեօք ամպախաղաց Ղըռաթի սէրն է ինձ հրապուրել,  
եռանդի բերել ու աշխոյժ տուել, թէ մի ուրիշ անյալտ  
պատճառ կայ, որ ինձ անվերջ լուզում, բորբոքում ու վերաս  
գրգիռ է բերում... Միայն ինչ էլ որ ուզում է լինի, ես  
դարձեալ մի երգ պիտի երգեմ ձեզ համար, որ փոքր ինչ  
սրտերդ շահեմ: — Այս ասելով, կրկին սազը ձեռքն առաւ ու  
սկսեց ոգևորուած երգել. —

Իմ աննման աշխոյժ Ղըռաթ,  
Քեզ Զամլիբէլ է հարկաւոր,  
Մի լինիր անզզոյշ Ղըռաթ,  
Քեզ Զամլիբէլ է հարկաւոր:

Թէպէտ ունիս շատ սիրահար,  
Բայց չեն նրանք ինձ հաւասար,  
Դուրս գալ զբօսնելու համար —  
Քեզ Զամլիբէլ է հարկաւոր:

Ես Քեօողլին եմ տարագիր,  
Մեծ լուս դու ես, իմացիր,  
Թռիր ու Թօն գետը անցիր,  
Քեզ Զամլիբէլ է հարկաւոր:

Երբ երգը վերջացրուց, սազը աճապարանօք տեղաւորեց,  
գցեց ուսը, որ իրան դեռ ևս շատ էր հարկաւոր ու սկսեց  
ձին չափ գցել, մի երկու պտուա էլ անել այն ընդարձակ  
հրապարակում, որ Ղըռաթի ջղերը բացուին — կազդուրուին:  
Կրկին անգամ եկաւ կ անգնեց նրանց առաջը, ուր

նստած էին Հասան փաշան ու Քեահա բէկին իրանց ար-  
բանեակներով:

— Թէհ մնաք բարեաւ, շնորհակալ եմ ձեր հիւրասիրու-  
թիւնից, ահա ես գնում եմ, ասաց ու Ղըռաթի գլուխը  
շուռ տուեց դէպի այն կողմը, որտեղից ահուելի Թօնա գետը  
վիշապի նման գոչոչալով ու փռփռալով գնում էր: Ափին  
մօտեցած ժամանակ Ղըռաթին այնպէս ուժգին աշտանակեց,  
որ անմեղ կենդանու կողերը համարեա ծալուցին, էլ ոչինչ  
աչքին չերևաց, նա միանգամ ինքն իրան գցեց քարափից:  
Կողերի սոսկալի ցաւից ու կսկիծից խեղճ կենդանին թէեւ  
ուզում էր ցաթկել միւս ափը, բայց հսար չեղաւ, նա ընկաւ  
արիւնահոս փռփռան գետի մէջ, իր հետ տանելով նաև  
Քեօողլուն. որոնք միասին մինչև յատակը խորասուզուեցին  
ջրի մէջ, և մի քանի ըոպէ մինչև անգամ հետքերն էլ չէր  
երևում:

Հասան փաշան ու այս անցքին բոլոը ներկայ եղող  
մարդիք ապուշի նման նայում էին նրանց յետեւից. իսկ շա-  
տերը մինչև անգամ կարծում էին, որ էլ փրկութեան ճար  
իսպառ չկայ. թէ Ղըռաթն ու Քեօողլին միասին ջրասոյզ  
եղան ու հետքերը յաւիտեան կորաւ:

Մի քանի ըոպէից յետոյ, նրանք յանկարծ երեացին ջրի  
երեսին, Ղըռաթը կարծես իբրև ջրային կենդանի համարձակ  
լողում էր խոր գետի մէջ... Գործողութիւնը շատ երկար  
չտեսեց, նրանք դուրս եկան միւս ափը... Զը նայելով որ  
Քեօողլին ու իւր սիրական սազը թուչուած էին, այնու  
ամենայնիւ նա իւր այդ սոսկալի գրութեան մէջ էլ, գարձեալ  
չկորցրեց իւր եռանդն ու աշխոյժը, անմիջապէս շապկահան  
անելով սազը, սեղմեց կուրծքին և իւր կորած ու նորից  
գտած սիրական Ղըռաթի սիրոյ համար, բորբոքուած սրտով  
այսպէս սկսեց երգել. —

Խելագարուած ընկած էի սարէ սար,  
Ամտո, աշուն, ձմեռ, գարուն, Ալվազ խան,  
Ինչ դժուարութիւնով վերադարձի,  
Կորցրած Ղըռաթս սիրուն, Ալվազ խան:

Քոյ անտարբերութեան հետեանքն է սա,  
Որ չափազանց տանջանք կրումեմ ահա,  
Թշնամին շուտ ինձ կը լինի մերձակալ,  
Մի դանդաղիր իմ քաջ արթուն Ալվազ խան:

Քեօողլին եմ, չարչարանաց ենթակալ,  
Թուցրի Ղըռաթը, Դօն գետն անցկացայ,  
Հաւաքիր քաջերս, հասիր, մի մնայ,  
Ինձ մի թողնիր ալստեղ նկուն, Ալվազ խան:

Ղըռաթը ջրի մէջ բաւական չարչարուելով, փորքաշները  
թուլացել էին, թրջուած թամքը քամակին չէր կանգնում,  
սահում էր և այս ու այն կողմ ծըռվում—թեքվում: Ալդ-  
պիսի դէպքում Քեօողլին շատ փորձուած էր. գիտէր որ  
փորքաշները թուլացած միջոցին կարող էր իրան վտանգ  
պատահել: Ալդ վտանգի առաջն առնելու համար, իսկոյն  
փորքաշները պնդացրեց և պատրաստ կանգնեց իւր տեղում,  
դեռ մի քիչ էլ հանգստանալու:

Բայց փակագծի մէջ ասենք, որ այդ քաջ տղամարդը  
երգելու հիւանդութիւն ունէր, որ խիստ աչքի էր ընկնում:  
Նա ուզում էր որ իւրաքանչիւր քայլափոխում, մի չնչին  
առիթի պատճառով էլ, դարձեալ մի երգ երգէ: Հէնց դրա  
համար էլ, երբ մի փոքր հանգստացաւ, առանց մտածելու,  
իւր ուտելու խմելու մասին, սկսեց երգել հետեեալ երգը:

Քիչ հանգիստ առ, փորքաշներդ ամրացնեմ,  
Ղըռաթ, ինձի շուտ Զամլիբէլ հասցրու,

Նախ սմբակներդ, ապա աչքերդ համբուրեմ,  
Ղըռաթ, ինձի շուտ Զամլիբէլ հասցրու:

Մի ծուլանար, ժամանակդ մի վատնէ,  
Դանդաղելը նժոյգի մեծ արատն է,  
Թուիր, մեզ թշնամեաց ձեռը մի մատնէ,  
Ղըռաթ, ինձի շուտ Զամլիբէլ հասցրու:

Հասակդ վայելուչ, պատկերդ չքնաղ,  
Ուր որ գնալու ես, գնա անլապաղ,  
Քեօողլին եմ, կեանքս կտամ քեզ մատաղ,  
Ղըռաթ, ինձի շուտ Զամլիբէլ հասցրու:

Հասան փաշան տեսնելով, որ թռչունը վանդակից  
թռաւ, այլ ևս գիւրեն չէ վերադարձնել, ուրիշ հնար մտածեց:  
Քաղաքի գոները արդէն բաց էին արել. փաշան անճարացած,  
Գեահա բէկի խորհրդով, մի քանի տաւարածախներ կարճ  
ճանապարհով ուղարկեց, որպէս զի նրանք կարողանան մի  
կերպ, փայլուն ոսկու միջոցաւ, Քեօողլուն գրաւել և  
Ղըռաթը յետ առնել:

Զը մոռանանք ասել, որ քիչ ժամանակ առաջ էլ մի  
գունդ զօրք էր ուղարկել, որ եթէ Քեօողլին չը կամաւորուի  
փողով տալ Ղըռաթը, կտրել ճանապարհը և ուժով բռնի  
խլել ու յետ բերել:

Բայց Քեօողլին երբ արդէն ձին նստած շարունակում  
էր ճանապարհը, յանկարծ նրա առաջ դուրս եկան մի քանի  
տաւարափաճառեր և քաղաքավարութեամբ բարեեցին նրան.  
Քեօողլին էլ փոխադապէս բարեեց նրանց: Մի քանի  
խօսքեր միմեանց հետ փոխանակելուց յետոյ, անծանօթները  
առաջարկեցին նրան Ղըռաթը ծախել իրանց վրայ:

Քեօողլին ոչ մի պատասխան չը տուեց, կարծես չը  
լսեց նրանց առաջարկութիւնը. միմիալն մի ինչ որ թեթև  
ժպիտ երևաց նրա երեսին:

Նրանք իսկոյն հասկացան, որ ալդ ժպիտը անտեղի չեր և նշան էր իրանց առաջարկութիւնը անտես առնելուն։ Այնուհետև սկսեցին շատ խնդրել ու աղաքել, որ չը մերժէ իրանց խնդիրը։

Բայց Քեօռօղլին մնաց շուարած. Բնչ անէր և Բնչպէս հեռացնէր ալդ մարդկանց... ըոպէաբար կարծես նրա գլխում մի միտք ծագեց, թէ ես կը գնահատեմ Ղըռաթը, եթէ իմ որոշած գինը տուին, լաւ, եթէ ոչ գլխիցս կը հեռանան։ Այսպէս մտածելուց յետոյ, ձեռքն առաւ սազը, և նրանց ունկնդրութեան հրաւիրելով երգեց.—

Պարոնալք Ղըռաթի գինը ձեզ ասեմ,  
Ութսուն հազար ոսկի գումարով չեմ տայ,  
Ութսուն հազար նախիր, ութսուն հազար հօտ,  
Ութսուն հազար ծնուած ոչխարով չեմ տայ։

Ութսուն հազար ջորի, ութսուն հազար ձի,  
Ութսուն հազար փարախ գոմէշի, ուղտի,  
Ութսուն հազար լծկան արօրի, գութնի,  
Ութսուն հազար նախիր տաւարով չեմ տայ։

Քեօռօղլիս շըջել եմ ութսուն հազար տեղ,  
Ութսուն հազար քաղաք, ութսուն հազար գեղ,  
Ութսուն հազար հարս ու աղջիկ տան շքեղ,  
Ութսուն հազար բեռ լալ, գոհարով չեմ տայ։

Տաւարափաճառները երբ լսեցին ալդ անհեթեթ գնահատութիւնը, զարմացած միմեանց երեսի նայելով, մնացին ապշած։ — „Զուր է ելքայր, ասաց մէկը միւսին։ Հասան փաշան եթէ իւր ունեցած բոլոր կարողութիւնը տայ, դարձեալ անհնար է ալդ գումարը լրացնել. լաւ է որ թուլ տանք գնալ։ Ահա այսպէս լուռ ու մունջ վերադառն քաղաք։

Քեօռօղլին հեռուից նկատեց, որ մի խումբ մարդեք ճանապարհի վերայ երեացին ու անհետացան։ Իսկոյն հասկացաւ որ նրանք չասան փաշայի գորքերիցն են և իրան են սպասում։ Բայց քաջը աներկիւղ գնում էր։ Երբ մօտեցաւ, ձին աշտանակեց և սրարշաւ Ղըռաթը այնպէս արագ անցկացաւ դարանամուտների կշտից, որ ինչպէս նետը թռչի հմուտ որսորդի լարած աշեղից, կամ գնդակը հրացանից։

Դարանամուտները մնացին շուարած. ապուշի նման նայում էին անցորդի ետևից, որ կարճ միջոցում բոլորովին անհետացել էր նրանց աչքերից։ Տեսան որ հետապնդելու ջանքերը ապարդիւն պէտք է անցնի, տխրադէմ վերադարձան Միլիստրայ։

Երեկոյ էր, արեն արդէն մայր էր մտել. դաշտ ու ձոր աստիճանաբար մթնում էր և լեռների գագաթները աղօտացան։ Մեր ուղեորը անձանօթ էր ալդ երկրի խառնիխուռը ճանապարհներին. նա մոլորուել էր՝ ուղիղ ճանապարհից շեղուելով, սանձը թողել էր Ղըռաթին, իսկ ինքը անձնատուր էր եղել բաղդին ու ճակատագրին և գնում էր գետափով։

Յանկարծ նրա աչքին երևացին մերձակալ փոքրիկ բլրի վերայ գոյնզգոյն ցոլացող կրակներ. նա սթափուեց, սանձը վեր առաւ, Ղըռաթի գլուխը շուռ տուեց դէպի այն կողմը, որ մերթ նսեմանում էր և մերթ բոցափառվում էին բենկալեան կրակների նման ծառների ճիւղերից քարշ ընկած լապտերները։

Դժբախտաբար երկնալին թագուհու շրջանառութեան ժամանակը չէր, աշխարհապարփակ մութը ծածկել էր ամեն մի առարկայ, ոչինչ չէր նշմարվում։

Քեօռօղլին այնտեղից փոքր ինչ հեռու, ձիուց վայր իջաւ, Ղըռաթի առաջի ու ետի ոտքերին փականք դրեց ու այնպէս թողեց արածելու. իսկ ինքը մօտեցաւ լսպտերներին,

կամեցաւ լրտեսել ներսի անցքերը։ Եւ յանկարծ ինչ է տեսնում, ահագին տարածութեան վերալ, բարձր ու ուղիղ սաղարթախտ ծառներով շրջապատած ազդիներ ու պարտէզներ, գեղեցիկ ծառուղիներով։ Մէջ տեղի հսկալ շինութեան պատշգամբի սանդուխներից վեր ու վալր ելևէջ են անում միքանի գեղեցկուհիք։ Մերթ ընդ մերթ մէջ տեղ երևում են այլակերպ հնդիկ ներքինիներ։ Շինութեան մէջ լսվում են թմբուկների, երգերի և ուրախութեան ձայներ։

Քեօռօղին ոչինչ չը հասկացաւ. կրկին վերադարձաւ Աըռաթի մօտ, վերարկուն քաշեց գլխին և անձնատուր եղած անուշ անդորրութեան՝ քուն մտաւ։

Գիշերային մռայլ ժամերը սահելով անցան. աղօթարանը բացուեց, գեղեցկատեսիլ անուշիկ գարնան զովարար գեփիւռը մեղմիկ հնչում էր։ Արտութը դաշտում, սոխակը վարդենու թփերի մէջ անուշ եղանակներով սկսել էին երգել իրանց ամենօրեալ սովորական քաղցը մեղեդին,

Մի կողմից թոշնոց անուշ դայլալը խառնուելով ծառների սօնափիւնների հետ, իսկ միւս կողմից գետի անհաւասար ալիքները քնքշաբար ու պչրանքով առաւօտեան հովերեց աւելի մօտ կպչելով ափերին, խորտակվում էին ահագին շառաչմամբ։

Բնութեան մէջ եղած այս աղմկալի ձայները սթափեցրին յոգնած Քեօռօղլուն խոր քնից։ Նա շատ էր շտապում շարունակել ճանապարհը. բայց քաղցածութիւնը նրան բոլորովին ընկճել և ուժասպառ էր արել. այնպէս որ՝ թեւերը թուլացել էին, ծնկները ծալ էին գնում. համարեա աչքերի լուսը նուազել էր։ Բայց ինչ արած, այդ անծանօթ վալրում ոչ մի հնար չկար ստամքսին բաւականութիւն տալու, Անձարացած եղաւ գետափը լուացուելուու. բարեբաղդաբար ալդտեղ նստել էին մի ծերունի հովիւ իւր կնոջ հետ միասին որ իրանց ոչխարները բերել էին ալդտեղ արածեցնելու։

Քեօռօղլին բարե տուեց հովուին և գնաց ջրի մօտ լուացուեց, իւր սովորական նամազը կատարեց, գարձաւ հովուի մօտ, որպէս ճանապարհորդ, նրանից մի կտոր հաց խնդրեց։

Նրանք չը զլացան, հանեցին իրանց հովուական աղքատիկ պարկից հաց ու պանիր և մի աման էլ փրփրալի թարմ կաթ տուեցին նորան։ Նա ալդ կերակուրները կշտապինդ կերաւ, խմեց աղբեղակի սառնորակ ջրեց, մկանունքները կազդուրուեցին, և ապա շնորհակալութիւն յայտնելով ծերունի հովիւներին, փոխադարձապէս վարձատրեց նրանց և մի ինչ որ լուրի էր սպասում։

Ծպտեալ գէրվիշը դիտմամբ ծանր ու բարակ նստել էր. բայց հովիւները չը գիտէին նրա ներքին նպատակը, չէին նշմարում նրա սրտի վրդովմունքն ու տարտամ դրութիւնը։

Դէրվիշը երբ կշտացաւ, ախորժեց ծխել, բայց գժբախտաբար նրա ծոցի մէջ, գետն ընկած միջոցին, թրջուել էին ծխախոտն ու աբեթը, իսկ կարծահանն էլ կորել էր։

Բարեբաղդաբար հովիւը ծխում էր. տեսնելով որ գէրվիշը ծխախոտը թրջուել է, հիւրասիրեց նրան իւր ունեցած հասարակ ծխախոտով։ Ալդ գէպքից օգտուելով, գէրվիշը հարց ու փորձ արաւ մօտակայ այգում ապրողների մասին։

Միամիտ հովիւը անմեղօրէն ասաց, որ այդ այգին պատկանում է Հասան փաշային, դա նրա ամարանոցն է։ Փաշան նշանաղրուած է Փերուզատ խանումի հետ. ահա լրիւ մի ամիս է, որ Փերուզատ խանումը մի քանի աղախինների հետ կերուխում է անում ալդտեղ, որ մօտ օրերս նրանց ամուսնութեան դաշինքը պէտքէ կապուի։

Երբ հովիւը խօսքը վերջացրեց, գէրվիշը անմիջապէս ոտքի կանգնեց, շնորհակալութիւն արաւ ու հեռացաւ նրանց մօտից։

— Ժամանակը թանկ է, մըմնջաց Քեօռօղլին ու արագ

քալիերով մօտենալով Ղըռաթին, սկսեց բաշը ձգել, աչքերը  
շփել ու մէկէն ի մէկ ցաթկեց նրա քամակը:

Մի քանի ըոպէից յետոյ, նա որպէս երգիչ, սազը ձեռին  
կանգնել էր գեղեցկատեսիլ ընդարձակ այգու ցանկապատի  
մօտ: Մի երկու անգամ վարժ մատները խաղացնելով նուա-  
գարանի լարերի վերալ սկսեց երգել մեղմ ու անուշ եղանակով.

Դօն գետի եզերքում փոռուած մեծ ալգին,  
Ալցելեցի, տեսայ մի քանի աղջիկ,  
Դէմքեր հրապուրիչ, հասակ վալելուչ,  
Բոլորն էլ մեղրաշուրթ ու շատ գեղեցիկ:

Բարձրացալտ մարմարեալ շատրուանի դէմ,  
Խնջոյք են պատրաստել ճաշակով վսեմ,  
Հազուստները շքեղ, գնացք նազանեմ,  
Հնչիւնները անուշ խօսքերը քաղցրիկ:

Ալս բնչ հրապուրանք, ալս բնչ տեսարան,  
Արդեօք սա երազ է, թէ իոկ երական,  
Քեօռօղլուս հանդիպեց վիճակ խնդական,  
Գըգուանք սիրուններից, սէր իիստ անուշիկ:

Քեօռօղլին երբ երգը վերջացրուց, Փերուզատ խանումը  
գրալանից մի ոսկի հանեց, տուեց աղախիններից մէկին, որ  
տանի երգչին տայ: Անմեղ աղախինը վեր առաւ ոսկին, ու-  
րախ ժպտալով, մօտեցաւ երգչին և ասաց.—«Համեցէք առ  
այս ոսկին, դէրվիշ բաբալ, խնդրումենք որ մեր քիչը շատի  
տեղ ընդունէք»:

—Ալդ բնչ ոսկի է, կեղծ միամտութեամբ հարցուց  
դէրվիշը:

—Փերուզատ խանումը քեզ ընծայ ուղարկեց:  
Քեօռօղլին մերժեց ոսկին ընդունելը և ասաց.—„մենք

պատկանում ենք ալն հոգեորականների դասակարգին, որ  
մեզ ընծայ տուողը, ինքը անձամբ իր ձեռքով պէտքէ տայ,  
որ Ալլահին հաճոյ լինի իր արած վարձատրութիւնը»:

Աղախինը ժպտալով վերադարձաւ Փերուզատ խանումի  
մօտ և մի առ մի պատմեց դէրվիշի ասածները:

Փերուզատ խանումը անպայման հաւատալով աղախինի  
ասածներին, տեղից վերկացաւ որ ինքը իւր ձեռքով անձամբ  
վարձատրէ երգչին:

Սլդ ժամանակ Քեօռօղլին տեսնելով նրա հրաշալի եր-  
կայն թուխ ծամերը, որ գլխից մինչև կրունկն էին հասել,  
չը համբերելով, մի գովասանական երգ ասաւ ծամերի վե-  
րաբերմամբ.—

Ով դու գեղանիդ նազաճեմ,  
Թող ծածանին թուխ մազերդ,  
Արժէ, որքան գովաբանեմ,  
(Մետաքսից կակուդ մազերդ). Կրկնել.

Անուշահոտ իւղով օծած,  
Դեղեցկուհու ձեռամբ հիւսած,  
Մի պահիր ալդպէս ամփոփած,  
Թող ծածանին թուխ մազերդ:

Վառ-վառ աչքերդ, ով հերարձակ,  
Ուղղիը Քեօռօղլուս համարձակ,  
Ոսկիդ աչքին հակառակ,  
Թող ծածանին թուխ մազերդ:

Մինչ այս երգի աւարտելը, գեղեցկատեսիլ Փերուզատ  
խանումը, մի քանի աղախիններով մօտեցել էր ցանկապատին  
և իւր քնքոյշ ձեռքում բռնած ոսկին պարզել էր Քեօռօղլուն:

Այդ ժամանակ խօրամտնկ Քեօռօղլին աննշմարելի կերպով այնպէս փափուկ խթեց Աըռաթթին, որ հազիւ մի երկու քայլ առաջ գնաց, այնպէս որ, եթէ մի երկու քայլ էլ Փերուզատ խանումը առաջ գալ յարմարութիւն ունենալ եւրմտադրուած նպատակին հասնելու:

Անփորձ ու միամիտ Փերուզատ խանումը, երբ քիչ էլ մօտեցաւ, իսկոյն Քեօռօղլին ձեռքը պարզեց իբր ոսկին առնելու, պինդ բռնեց նորա փափուկ հոլանի բազկից և ուժգին վեր քաշելով առաւ գաւակը, ինչպէս որ բազէն լափշակում է անմեղ աղաւնուն:

Նրջապատող աղախինները սկսեցին ճիչ ու աղաղակ բարձրացնել, լաց ու կոծ անելով ծեծում էին ծնկներին ու փետում մազերը, բայց ի զուր:

Վրէժխնդիր Քեօռօղլու սիրտը կարծես քարացել էր. չէր լսում նրանց աղեկտուը ձայնը. Ելդ բոպէին Քեօռօղլուներքին աշխարհում ներոնական հոգի էր թագաւորում, բոլորովին անուշադիր ու անտարբեր մնաց. ձին մտրակեց—գնաց անհետացաւ, իր հետ տանելով Փերուզատ խանումին:

Հասան փաշան Փերուզատ խանումի կողմից ոչ մի տեղեկութիւն չունէր, պատահած տնցքը նրան անյայտ էր: Նա արդէն պատրաստվում էր գնալ Քեօռօղլու յետեկից, որ կամ սպանէ, կամ մի կերպ աջողի Աըռաթթը վերադարձնել: Հէնց այդ խառնակ ու տարտամ միջոցին, լանկարծ Փերուզատ խանումի գուժկան ներքինին, սպասաւորները տիրագէմ ներկալացան փաշային և հազորդեցին անակնկալ դժբաղդութիւնը:

Հասան փաշան ալլալուեցաւ և տեղն ու տեղը արձանացած մնաց: Նա անշուշտ կը ցնորուէր, եթէ Քեահա բէկին յուսատու աղդու խօսքերով չսփոփէր նրա դառնացած ու վշտացած սիրտը:

Զօրքն արդէն սպառազինուած պատրաստ կանգնել էր և սպասում էր հրամանատարի տուած նշանին, որ առաջ

խաղայ. բայց այդ միջոցին Հասան փաշան խիստ վատ տպաւրութեան տակ էր: Գուժկանների հազորդած լուրը շատ վատ էր աղդել նրան:

Թէպէտ Քեահա բէկին այդ լաւ գիտէր, բայց ինքը հեռատես ու լուրջ մարդ լինելով, անվերջ մտածում էր իրանց անելիքների վերայ:

Երբ Հասան փաշան անվերջ ընկղմած էր խոր մտատանջութեան մէջ, լանկարծ Քեահա բէկին սուրբ պատենից հանեց և օդի մէջ շողացնելով բարձրաձայն գոչեց.—„Փամանակ է առաջ գնալու“ ասելով, ձիու գլուխը շուռ տուեց ու գուրս եկաւ քաղաքի դռնից:

Զօրքը տեղից շարժուեց, ամբողջ քաղաքը դղրգում էր:

Բայց Քեօռօղլին լաւ գիտենալով, որ Հասան փաշան իւր արածները չը պիտի մարսէ, և բազմաթիւ զօրքով անշուշտ պիտի կտրէ իւր ճանապարհը, նա ջանք էր անում ժամ առաջ հասնել «Ղանլի Մաղարայ» կոչուած քարայրը, որ գտնվում էր այդ սահմանում, մի անմատչելի քարաժայռի գագաթին, որպէս զի Փերուզատ խանումին թագցնէր այդ քարայրում և ինքը մենակ գուրս գար հրապարակ նրանց դէմ կռուելու:

Սակայն գժբաղդ Փերուզատ խանումը տեսնում էր, որ Քեօռօղլին իրան տանում է սերթ լեռնաշղթաներով ու անտառներով և մերթ ձորերով ու անմարդաբնակ զառիվալերով, սաստիկ մտատանջվում էր և յուսահատ ծածուկ մրմնջում.—«Ո՞հ. Աստուած իմ, Աստուած, արդեօք այս ուր է տանում ինձ այս հրէշը և ինչ պիտի լինի արդեօք իմ ապագան այս ճիւտի ձեռքում»: Մանաւանդ գիտենալով որ, ոչ իրան գրութեան մէջ մտնող կալ, ոչ էլ օգնութեան ձեռք կարկառող սրտի սաստիկ յուզմունքից սկսեց լաց լինել:

Քեօռօղլին լսեց նրա հեկեկանքի ձայնը, և չը նայելով որ նա այդպիսի դէպքերում, ոչնչի վերայ ուշագրութիւն

չեր դարձնում, այնուամենալիւ ալդ դէպքում կարծես մի ինչ որ ներքին ազդեցութիւնից դբդուած խղճահարուեց և չը զացաւ թշուառի սիրտը մի քանի խօսքով ամոքել։ Վերջ ամենայնի ալդ նեղ դբութեան մէջ էլ անձնապաստան հերոսը իւր անփոփոխ բնաւորութեամբ, սկսեց նրան մխիթարելու համար, ազատ երգել. —

Ինչու ես արտասվում գեղանիդ անմեղ,  
Կարծում ես մեր ցեղը դիւցազնական չէ,  
Քեզ քոյ հայրենիքից բերողը այստեղ,  
Անհատներից մէկն է, կնոջ նման չէ։

Իմ քաջերս եօթը խմբի բաժանուած,  
Պտրում են ինձ վագրի նման կատաղած,  
Մինչ դժոխքն էլ իջնեմ, կգան անկասկած,  
Մեծ ջարդ կուտան վատից. իմ խումբն անբան չէ։

Քեօոօղին եմ, դեռ մէկին չեմ յաղթուել,  
Ինձ է վերապահուած յաղթանակ տանել,  
Թշնամու կողերը նիզակով ծակել,  
Լերդ ու թոք դուրս թափել, թոյլ մարդու բան չէ։

Վերջապէս մեօօղին Փերուզաա խանումին ու Ղըռաթին տեղաւորեց քարանձաւում ու ալդ մասի միամտուեց։

Բայց ալդ անցքից մի քանի օր առաջ, Սլվագ խանը երազում տեսնում է, որ իբր թէ Քեօօղին ընկել է մի լճի մէջ և գլխին հաւաքուել են անթիւ մեծ ու փոքր ձկներ. իսկ Քեօօղին դեռ կիսառւժասպառ բազուկները շարժելով մաքառում է նրանց դէմ և չի թողնում ոչ մէկին մօտենալ իրան։ Բայց լճի միջից մի մեծ կոկորդիլոս գլուխը բարձրացնելով ու աչքերը սեեռելով նրա վերայ ձգվում էր կլանել խեղճ Քեօօղիլուն։ Այս արհաւերքից սարսափած վեր է թըռ-

չում, և հասկանում է, որ Քեօօղին անշուշտ մի մեծ նեղութեան մէջ է։ Անմիջապէս հրաւիրում է քաջերին և մանրամասն պատմելով տեսած երազը, հրամայում է պատրաստուել և հետեւ իրան։

Քաջերը նոյն ժամայն պատրաստվում են ու կանգնում ամրոցի մէջ գտնուած ընդարձակ հրապարակում, որտեղ Ալվազը արդէն սպառազէն կանգնած էր։

Խմբի մի չորբորդ մասը թողեց ամրոցի ուահպանութեան համար, իսկ մնացածներին առաջնորդելով, դուրս եկաւ ամրոցից և ճանապարհը ուղղելով դէպի Սիլիստրայ, օգնութեան հասնելու դիւցազն Քեօօղիլուն։

Հասան փաշալի զօրքը արդէն պաշարել էր Քեօօղիլուն և քարայրից հազիւ կէս մղոն հեռաւորութեան վերայ բանակ դրել։

Երեկոյ էր արդէն, արեգակի վերջին շառաւեկներն էլ անյալտացան։ Գիշերը տանելով իւր յաղթանակը, մութն աւելի սաստկացաւ և մուալլ գիշերը իւր սև քօղը սփռեց տիեզերքի անսահման տարածութեան վերայ։ Ալդ միջոցին քարայրից դուրս գալով Քեօօղին, սկսեց կամաց կամաց օձապտոյտ նեղ շաւիղներով փար իջնել դէպի դաշտը։ Անձնուրաց հերոսը քալերն ուղղեց դէպի Հասան փաշալի բանակատեղին և մթութեան մէջ մի հայեացք ձգեց տխուր պատկերի վերայ, յետոյ ստուերի նման անցկացաւ նրանց միջից, գաղտագողի լրտեսեց նրանց ոյժն ու դիրքը և դուրս գալով բանակից, փոքր ինչ առաջ գնաց, բարձրացաւ մի փոքրիկ բլրակի վերայ ու ալսպէս երգեց. —

Դուրս արի բանակից, ով Հասան փաշա.

Այսօր մէկը քեզ հետ կատակելու է,

Զէնքի շառաչիւնից, Ղըռաթի ձայնից,

Սար ու ձոր արձագանք արձակելու է։

Հրացանն հնարուեց, քաջութիւնն անցաւ,  
Կեռ թուրը պատեանում ժանգուաւ—փթաւ,  
Աւանդ կայ պապերից, անգութ անիրաւ,  
Թշնամուն տաք շամփրով պսակելու է:  
Քեռօղլի, քեզ մահուան բաժակը դառն է:  
Թող նա ըմպէ, որի արիւնը սառն է,  
Քաջը կոռւի մէջը վէրք կուտայ կառնէ:  
Երկչոտը ոտքի տակ սատակելու է:

Հասան փաշան Քեռօղլու երգը բառ առ բառ լսելուց  
յետոյ, ևս առաւել զայրացած, սկսեց սպառնալիքներ կար-  
դալ ու անպատիւ խօսքեր շփռել յանգուգն հակառակորդի  
հասցէին:

Երկու հակառակորդներն այնքան մօտ էին միմեանց,  
որ Քեռօղլին ևս պարզ լսում էր նրա սպառնալիքներն ու  
հայկոյանքները: Սակայն Քեռօղլին այն աստիճան փորձուած  
էր կեանքի մէջ, որ բանի տեղ չը դրեց նրա անվայել խօս-  
քերը, գիտէր որ նա դառել է կորիւնը կորցրած կատաղի  
առիւծ: Ի՞նչպէս չը մռնչէր ու զայրանար, երբ տեսնում էր,  
որ երկաթեալ վանդակից թռել անհետացել է իւր ալախօ-  
սիկ բլբուլը, ալլ ևս այնուհետև յուս չկար լսելու նրա քաղցը  
դալլալիկը.. Կորել էր նրա չնաշխարհիկ հարսնացուն—Փե-  
րուզատ խանումբը. հետնապէս կորել էին նրա լսելքն ու  
միտքը, տեղահան էին եղել սիրտն ու հոգին... միով բանիւ  
խորտակուել էր նրա կենաց սիւնը: Այս ամենը ինկատի ու-  
նենալով, Քեռօղլին թոյլ չը տուեց իրան, նոյնանման ան-  
պատիւ խօսքերով պատասխանել նրան: Նրա մեծահոգու-  
թիւնը թոյլ չը տուեց իրան, հասարակ մահկանացուների  
նման, դիւրագուգիս լինելու դէպի նտ: Նա վեհանձն էր և  
վեհանձնութեամբ էլ պատասխանեց Հասան փաշալին հե-  
տեեալ խորիմաստ երգով.—

Հասան փաշա, ինձանից չես օգտուի,  
Զէ որ ես քաջութեան նշաններ ունիմ,  
Անմեղ մի բարկանայ, զուր է քոյ ջանքը,  
Գիտցիր, հազար ու մի դարաններ ունիմ:

Հիմա կուգայ խան Այվազս օգնութեան,  
Գիժ քաջերս կտամ սաստիկ հրաման,  
Սրախողխող կանեմ զօրքդ անպայման,  
Քեզ գերեվարելու պալմաններ ունիմ,

Քեռօղլիս ուխտել եմ իմ ծնած օրից,  
Վրէժիննդիր լինել անմիտ հզօրից,  
Հիմա իմ քաջերս դուրս կդան ձորից,  
Տես բնչ նիզակակից պաշտպաններ ունիմ:

Երգի վերջին երկու տողը Քեռօղլին դեռ չէր կըրկ-  
նել, որ իւր խումբը Այվազի առաջորդութեամբ արդէն մօ-  
տացել էր Ղանլի Մաղարալին, ուր պատսպարուել էր ինքը  
Քեռօղլին:

Այդ միջոցին յանկարծ մի ծանօթ ձայն լսելի եղաւ մօ-  
տացող խմբին: — „Տղայք կանգնեցէք, ասաց Այվազ խանը.  
գիտենալով որ այդ ձայնը իրանց ծանօթ է:

Խումբը անշարժ մնաց իւր տեղը: Բայց ձայնը նորից  
կըկնուեց, մինչև անգամ բառ առ բառ լսուեցին հետեեալ  
խօսքերը—

„Հիմա իմ քաջերս դուրս կդան ձորից,  
„Տես բնչ նիզակակից պաշտպաններ ունիմ“:

Բոլորը լսեցին և համոզուեցան, որ դա իսկապէս Քեռօ-  
ղլու ձայնն է:

Այվազ խանը խումբը թողեց ձորակի մէջ Դալի իւսու-  
ֆի հովանաւորութեան տակ, ինքը հետը վերցրած իամուրչ-

օղուն, Բաբալ — Քեանհանին և Ռեհան Արաբին, առաջ անցաւ Քեօօղուն գտնելու:

Երբ ձորակից զուրս եկան այս չորս քաջերը, սկսեցին միայն իրանց հասկանալի խորհրդաւոր ու պայմանական նշաններ (սիկնալ) տալ այլ և այլ ձայներով ու սուլելով, որ իրանց մէջ մշտապէս սովորական էր ասպատակութեանց ժամանակ:

Քեօօղին լսելով իւր խմբի տուած խորհրդաւոր նշանը, ինքն էլ իւր կողմից պատասխանեց նոյն նշանով:

Մյնուհետև բոլորը երբ համոզուեցին, որ այլևս ոչ մի տարակոյս չկալ, որ հանդէպներինը Քեօօղին է, սկսեցին արագ քայլերով դիմել դէպի հրաւիրող ձայնը, որ տանում էր դէպի Ղանլի Մաղարան:

Երկար չը տևեց, նրանք մօտեցան ժայռին և տեսան որ Քեօօղին սազը ձեռքին մենակ նստած մի բարձրադիր գնդաձև քարի վերալ, աշխուժով երգում էր.—

Մի ձայն հասաւ իմ ականջին,

Ալվազն է եկողն, Ալվազն է,

Ոտտաղ լինիմ նրա կեանքին,

Ալվազն է եկողն, Ալվազն է:

Ականջ գնելով ձայներին,

ծանաչեցի իմ քաջերին,

Դամուրչօղու հետ միասին,

Ալվազն է եկողն, Ալվազն է:

Ռեհան Արաբն արիւնահեղ,

Բաբալ-Քեանհանը խիստ զօրեղ,

Հետը առած կուգալ մէկ տեղ,

Ալվազն է եկողն, Ալվազն է:

Լաւ իմանալ հասան փաշան,

Քեօօղին չէ անօգնական,

Ամեն բոպէ զօրեղ պաշտպան,

Ալվազն է եկողն, Ալվազն է,

Քեօօղին երգը վերջացրուց, սազը վայր դրեց և քաջերը տեսածին պէս մօտեցաւ նրանց ու գրկախառնուելով բոլորին մի առ մի համբուրեց ու առողջութիւնները հարցըց. իսկ քաջերը զգածուելով այս ջերմ համբոլներից, հեկեկալով լաց եղան:

Մի ժամ առ աջ տրտմութեան մէջ սուզուած հսկան, այժմ փրկութեան նաւի վերայ նստած, իրան նաւահանգիստն էր կարծում, ուր վառվում էր ազատութեան փարոսը:

Սովորական խօսակցութիւնից յետոյ, Քեօօղին պատմեց իւր գլխից անցկացած արկածներն ու կրած նեղութիւնները: Պատմեց թէ ինչ դժուարութեամբ էր Նըռաթր դուրս բերել Սիլիստրացից, և թէ ինչ հանգամանքի շնորհիւ էր փախցրել Փերուզատ խանումին:

Երբ Քեօօղին քարին նստած պատմում էր մօտիկ անցեալի տիսուր պատմութիւնը, սրա հակառակ, Հասան փաշալի բանակում մեծ ուրախութիւն էին անում, այնպէս որ, կարծես թէ առիւծը գառագիղումն էր և իրանք յաղթանակ տարած քաջի պէս պէտքէ ուրախ վերադառնալին հայրենիք. ամենեին աչքի առաջ չունենալով առաջիկալ փորձանքն ու անսպասելի ձախորդ գէպեքը:

Քեօօղին իւր կարճ պատմութիւնից յետոյ, մտիկ տուեց գէպի բանակը և տեսաւ որ Հասան փաշալի խալտաճամուկ բանակը լոնդանուր ուրախութեան մէջ է, և նրա մեծամեծները փաթաթուած թանկագին լոդիկների մէջ, որոնք զարդարուած էին սոկէ թելերից գործուած լայն երիզներով ու գեղեցիկ ճարմանտներով, հեռուից մի արհամարհական հայեացք ձգեց նրանց վերալ և ժապիտն երեսին ծաղրելով երգեց.

Գլդակներդ ծուռ փաթաթողք,

Ալդ բնչ յիմար արշաւանք է,

Նըջանը չի մնալ ալդպէս,

Զախող գէպեն այլ կերպարանք է:

Թանկագին լոդիկ հագնողներ,  
Մեծ մեծ գիւղերի տիրողներ,  
Առանձին, ես եմ ասողներ,  
Կռուի դաշտը տառապանք է:

Քեռօղլի, ջանք չունեցողը,  
Թշնամուց վրէժ չառնողը  
Կռուի մէջ չը մեռանողը.  
Վէրք չառած գայ՝ ամօթանք է:

Քեռօղլին երբ երգի աւարտն առաւ, սազը վայր դրեց:  
Ալվազ խանը ոտքի կանգնելով խնդրեց, որ թոյլ տայ իրան  
վերադառնալ քաջերի մօտ և խումբը հետն առած գայ,  
Հասան փաշալի դէմ պատերազմելու:

Քեռօղլին կամաւորուեց, միայն այն պայմանով, որ  
Ուէհան Արաբն էլ հետը գնայ. Թէպէտ շաս վստահ էր Ալվազի  
քաջութեան վերայ, բայց պատուիրեց որ դարձեալ զգոյշ  
մնան, որովհետև երկիրն ու մարդիքը անծանօթ էին նրանց.  
իսկ Բարայ Քեանհանին պահեց մօտը խորհրդակցելու ապագայ  
անելիքների մասին:

Ալվազի գնալուց բաւական ժամանակ անցել էր, բայց  
նրա և իւր խմբի կողմից ոչ մի տեղեկութիւն չկար: Ալդ  
մասին Քեռօղլին կասկածի մէջ ընկաւ, մտածելով որ մի  
գուցէ թշնամու բազմութիւնը ահարկութեան տակ դրաւ  
քաջերին: Բայց Բարայ Քեանհանը յորդորում ու վստահաց-  
նում էր, որ անհոգ մնայ, որովհետև քաջերի երակներում  
երկիւղ կրելու արիւն չկայ: Սակայն Քեռօղլին միանդամ  
երկմտել էր և առաջադէմ Ալվազի մէջ յետադիմութեան  
հետքեր էր նշմարում:

Այլ ևս չը կարողանալով զսպել իրան, թախծալի ու  
վրդուած սրտով վեր առաւ սազը և բորբոքուած երգեց.—

Գնաց, էլ չը վերադարձաւ,  
Ալդ իմ ապերախտ Ալվազը,  
Երկի ինձ խաբեց փախաւ,  
Ալդ իմ ապերախտ Ալվազը,

Հասան փաշի զօրքը բազում,  
Երկիւղ գցեց քաջի սրտում,  
Ինձ թշնամու ձեռն է մատնում,  
Ալդ իմ ապերախտ Ալվազը:

Զորս կողմս նստած թշնամի,  
Կարօտ եմ մէկ բարեկամի,  
Քաջ անունս ընկճել կամի,  
Ալդ իմ ապերախտ Ալվազը,

Ես Քեռօղլին եմ բանիմաց,  
Թշնամու դէմ չեմ թագնուած,  
Տիրոջը ուրացաւ գնաց.  
Ալդ իմ ապերախտ Ալվազը:

Քեռօղլին մինչ վերջացնում էր այս վերաւորական  
երգը, յանկարծ Ալվազի ու Ուէհան Արաբի առաջնորդութեամբ  
քաջերը շրջապատեցին Դանլի Մալարան, ուր թագցրած էր  
Հասան փաշալի հարսնացու. Փերուզատ խանումը:

Քեռօղլին տեսնելով նրանց ներկայութիւնը, ամաչեց  
և զղջաց իւր տարած կարծիքների մասին և ուրախութիւնից,  
կաչաղակի նման, տեղից վեր ցամեկեց ու համբուրեց Ալվազի  
և Ուէհան Արաբի ճակատը: Նոյնպէս ոտքի կանգնած սիրալիր  
կերպով ողջունեց և նորեկ քաջերին: Ապա, որպէս պարա-  
գլուխ բոլորին, հրամայեց որ նրանց մի մասի համար անմի-  
ջապէս վրաններ խփեն իւր նշանակած բանակատեղում, իսկ  
մնացած երկու երրորդ մասը կրկին յանձնուեց լայտնի ուղ-

մագէտ ու քաջ պատերազմող Ռէհան Աշաբին և Ալվազ խանին, որ նրանք իբրև առաջին փորձ, գիշերը լանկարծ վրայ տան թշնամու բանակին:

Քաջերը ուրախութեամբ յանձն առան իրանց վրայ դրած պարտականութիւնը, Նրանց մի խումբը գնաց դէպի աջ, իսկ միւսը դէպի ձախ:

Օրը այնքան տարաժամ էր, որ այդ միջոցին Հասան փաշալի զօրքը ընկլմած էր խոր քնի մէջ—բանակում տիրում էր գերեզմանական լոռութիւն:

Յանկարծ Ռէհան Արաբը հրէշի նման վալրենի աղաղակներով մի յարձակում գործեց բանակի վերալ ու նրանց շփոթելով լետ քաշուեց: Մի և նոյնն արաւ և Ալվազ խանը: Բայց ամբողջ բանակը մի քանի բուպէում դղբգաց. շփոթուած զօրքը գէնքի դիմեց... միայն յարձակումը հակառակ կողմերից դարձեալ կրկնուեցաւ: Հասան փաշալի քնահարամ զօրքը անդիտակցաբար աւելի միմեանց էին կոտորում, չը ճանաչելով ու չը որոշելով թշնամին ու բաեկամը, քան հակառակորդ թշնամուն:

Այդ պատերազմում Քեօռօղլու քաջերը համարեա ոչ մի կորուստ չունեցան, բացի մի քանի աննշան վիրաւորներից և թշնամուն ծաղը ու ծանակ անելով, ուրախ յաղթանակով վերադարձան Դանլի Մաղարան, ուր Քեօռօղլին Բաբալիքնանհանի հետ միասին նստած անհամբեր սպասում էին քաջերի վերադարձին:

Խաւարահալած արշալուսից խոլս տուեց մռալլ գիշերը, աղօթարանը բացուեց, ամեն գաղտնիք մերկացաւ: Հասան փաշալի զօրքերը հազիւ դադարել էին միմեանց կոտորելուց, խաղաղութեան դրօշակը պարզուեց, դալարագեղ հովիտը ներկուել էր արիւնով, փառած դիակներին թիւ չկար... միով բանիւ տեսաբանը սրտաճմլիկ էր ու տիրուր:

Հասան փաշան Քեահան բէկի հետ դուրս եկաւ բանակից

և խոռված հոգւով նայում էր չորս կողմը: Սարսափեց երբ տեսաւ Քեօռօղլու դրած նոր բանակը, որ ամբողջովին շրջապատել էին Ղանլի Մաղարան:

Այդ երկու հակառակ բանակները դէմ առ դէմ կանգնած, ահոելի վիշապի նման ուզում էին վրայ ընկնել ու կլանել միմեանց:

Արեգակը մի ջիտաբօյ դեռ նոր էր դուրս եկել հորիւզոնից, որ յանկարծ երկու կողմից էլ պատերազմական փողերը հնչեցին: Հասան փաշան իւր կանոնաւոր զօրքի հրամանատարն էր, իսկ Քեօռօղլին անզուսպ ջալալիների:

Երկու կողմից էլ կռուզները պատրաստ կանգած էին: Հին աւուրց ամայի հովիտն ու լեռնագաշերը եռում էին մարդկանց բազմութիւնով. երկու կողմն էլ պատրաստ էին յարձակում գործելու միմեանց վերայ:

Քեօռօղլին սպառազինուած նստել էր իւր Ղըռաթի վերայ և ինչ ինչ կարգադրութիւններից յետոյ՝ վեր առաւ սազը և խրախուսելով իր քաջերին, պատերազմական փողին յարմար եղանակով երգեց հետևեալ դիւցազնական երգը.—

Երբ քաջը դուրս գալ քաջի դէմ,  
Այս կռուի մէջ հուր կը թափուի,  
Քաջի դէմ վախկուն է նսեմ,  
Արիւնը զերթ ջուր կը թափուի:

Քաջը կրում է վեհ անուն,  
Կայ նախատինք երկչուտներուն,  
Կորիճից միշտ կարմիր արիւն,  
Վախկուից վրփուր կը թափուի:

Քաջն արեան կաթիլը վերջին,  
Զի խնայիլ իւր ընկերին,

Իսկ երկչոտի սև երեսին,  
Ո՞րշափ թուք ու մուր կը թափուի:  
Մենք գոռ պատերազմ մղելով,  
Միշտ յաղթել ենք մեծ ջարդ տալով,  
Լախտեր վահանաց խըֆելով,  
Շերտերից փշուր կը թափուի:  
Քեօողլին եմ խիստ պարզաբան,  
Կոռւի դաշտը կանեմ բոստան,  
Եատ գլուխներ սոխի նման,  
Իմ սրից միշտ զուր կը թափուի:

Երգը վերջացնելուց յետոյ, պատերազմն սկսուեց. Երկու կողմից էլ յարձակումներն աշեղ էին. լսում էին աղեղանց շաշիւններն ու սրաթռիչ նետերի ոլացումները.

ասան փաշալի ահարեկ զօրաց գունդը պատառուեց իրարանցումից և տիրեց նրանց սարսափելի շփոթ ու աղմուկ. իսկ Քեօողլու անզուսպ ու գլխից ձեռք վերցրած քաջերի համար այդպիսի դէպքերը խաղ ու խնդրում էին:

Բայց չը մոռանանք ասել, որ Քեօողլին նախ քան պատերազմը իւր քաջերին խստիւ պատուիրել էր, որ Հասան փաշալին և Քեահա բէկին, որքան հնար էր աշխատել կենդանի ձեռքակալել.

Այդ միջոցին Քեօողլին քաշեց իւր պողովստիկ սուրը և շողացնելով առաջ անցաւ. բոլոր իւրալինները հետեցին նրան, պատառող վոգրների նման թափուեցին Հասան փաշալի զօրքի մէջ. անգթաբար կոտորում էին, առանց աջ ու ձախ նայելու. Թոլլերը արորվում էին ոտքի ատկ, ծաղկալի կանանչ հովիտը ներկուեց մարդկանց արիւնով, ընկած դիտաները լողում էին արեան մէջ... Տեսարանը քստմնելի և զարդուելի էր. Մարդասիրութիւնը բացակալելով, անգթութիւնն էր գործ տեսնում թշուառների գլխին:

Այս անսպասելի հարուածն ու կոտորածը Հասան փաշալին, իւր մեծամեծներին և զօրքին դէպի փախուստ դարձուց, որոնք գողերի նման թագնուելով ամրացել էին շրջակա անմատչելի քարանձաւներում ու ձորերում:

Հասան փաշան երբ լսում էր հեռուից իւր դասալիք եղած զօրքերի անգթաբար կոտորուելը, որոնց լացն ու աղմզակը երկինք բարձրացած բողոքում էր իւր անտեղի արարմանց դէմ, թէպէտ զլջաց իւր արածից, բայց արգէն ուշ էր: Ինքն ևս հառաչեց ու լացաւ և այնուհետև հաստատապէս վճռեց, որ մի անգամ ևս արձակ համարձակ դուրս գալ թշնամու դէմ կոտուելու, կամ յաղթէ՝ կամ յաղթուի. եթէ ոչ Ղըռաթին, գոնէ Փերուզատ խանումին, կամ աղտել գերութիւնից, կամ մեռնել և վատ անուն չը ժառանգել, որ ապագալի խօսելիք լինի:

Այսպիսի մտածութեանց մէջ խճճուած, Հասան փաշան չը գիտէր, որ Քեօողլու քաջերը առանձին խմբերի բաժանուած սար ու ձոր ընկած, որսորդի վարժ բարակների ու քէրծէների նման, նրա խիստ հրամանին համաձայն, որ նում էին իրանց որսերին:

Այդ միջոցին Հասան փաշան դուրս գալով իւր պատապարուած ապաստանից, հրաւէր կարդաց իւր դասալիք եղած թագնուած զօրքին ու զօրակարներին, որ զան ժողովին իւր շուրջը:

Երբ այս ու այն կողմից, հողի տակ թագնուած խլուրդների նման, եկան շրջապատեցին իրան. նա ճարտարախօս ու քաջ հուետորի նման, տաճկին լատուկ մեծաբանութեամբ, ամեն ինչ դէպի լաւը յեղաշրջելով, բացատրեց նրանց և յարեց, որ „այդ քարանձաւներում թագնուելով, մենք ոչինչ չենք կարող շինել: Մեր զօրքերի մեծ մասը, ասաց, պատերազմում կոտորուեցան ու զեռ կոտորվում են: Եւ ինչպէս ևս հոտ եմ առնում, մեր անօրէն թշնամին դեռ մեր հետքը

որոնում է և աշխատում մեղ իսպառ ջնջելու։ Ուրեմն դուրս դանք հրապարակ և դէմ յանդիման կռուենք, կամ կատարելապէս յաղթենք, կամ յաղթուինք... Ով գիտէ, գուցէ Շլահը մի բան կանի”։

Այս համառօտ հրաւէրից յետոյ, զօրքը բաժանեց երկու մասի, մի մասը յանձնեց Քեահա բէկին, որին վիճակուեց պատերազմել Դալի-Հասանի և Դալի-Պալթի զօրաց հետ, իսկ միւս մասին ինքը—փաշան առաջնորդեց Դամուրչօղլու և իսպալլու դէմ։

Սակայն Քեօուօղլին դեռ անտեղեակ այս կարգադրութիւններից, Նրա քաջերը, որ մասամբ լսել էին այս մասին, առանց ժամանակ կորցնելու, գնացին շրջապատեցին Հասան փաշալի բանակը և պատերազմը նորից սկսուեց աւելի լայն ծաւալով։

Հասան փաշալի զօրքերը հանդիպելով Քեօուօղլու հրոսակներին, դէմ առ դէմ սկսեցին կոտորածը. երկու կողմից էլ հերոսաբար ընկնում էին քաջերը, բայց այն տարբերութեամբ, որ Հասան փաշալի զօրքից կըկնապատիկ աւելի էր կոտորվում, քան Քեօուօղլու քաջերից։ Ալսպէս մի քանի ժամ շարունակելով պատերազմը, Հասան փաշալի կողմը պարտութիւն խոստովանուեց և յաղթանակը Քեօուօղլու քաջերը տարան։ Թէւ ոչ առանց նշանաւոր կորուստի։

Միւս կողմն էլ մի ուրիշ ճակատամարտ էր. մղվում. Ուշան Արաբն ու Քեահա բէկին մարտնչում էին միմեանց հետ և աշխատում մէկ մէկի տապալել։ Երկար դիմադրելուց յետոյ, վարչապէս Քեահա բէկին ընկճուեց—պարտուեցաւ և յաղթանակը մնաց Ուշան Արաբի կողմը։

Երբակալուեց Քեահա բէկին. Հասաւ նա և Հասան փաշալի ճգնաժամը, որին ինքը բնաւ չէր սպասում։

Քեօուօղլին այս ամենը դիտելով, ահարկու գոչմամբ, մահու հրեշտակի նման, կանգնեց Հասան փաշալի գլխին ու

նիզակը ճօճացնելով որոտաց.—«Կասան փաշա, իմ և քո կենաց դատավճիռը այստեղ է կայանալու։ Դու խաբէութեամբ տարար իմ Ղըռաթը, իսկ ես քաջութեամբ բերի քոյ հարսնացուն-Փերուզատ խանումին, որոնք իսկապէս պատճառ եղան այսքան կոտորածներին և անմեղ արեան թափելուն. մանաւանդ թէ անուանարկեցին ձեր մեծահոչակ անունը. Իսկ ալժմ տեսնում էք, որ գուք մեր գերին էք. բայց մենք ձեզ գերուտեղ չենք ընդունում, այլ ինչպէս առաջ, նոյնպէս էլ ալժմ, գուք դարձեալ մեղ համար նոյն կառավարիչ փաշան էք և մեր պատուաւոր հիւրը։ Մի քանի օր մեղ մօտ հիւր կը լինիք, ձեր արժանաւոր պատիւը կստանաք, այնուհեաւ Աստուած ձեզ հետ, արժանավայել պատուով ճանապարհ կը ձգենք, ապահով կացէք»։

Լսելով այս առնական խօսքերը մի սրիկալ կարծուածի քերանից, Հասան փաշան զղջաց իւր արարմունքներից, հիծեց, լացեց իւր սխալմունքների վերալ և վեհաբար տեղից վեր կենալով փարեցաւ Քեօուօղլու կըծքին, խոստովանելով իւր սխալմունքները։

Այնուհեաւ համբուրուելով միմեանց հետ, որոնց հետեցին երկու կողմի մեծամեծները, խաղաղութեան դաշն կապեցին և նոր բարեկամութիւն հաստատեցին։

Քեօուօղլին բռնելով նրա ձեռքը, հրապարակապէս ասաց.—«Այսուհեաւ գուք մեր մեծն էք ու մեր թանկագին բարեկամը, միամիտ կացէք»։

Այս խօսքերից յետոյ Հասան փաշան ու Քեահա բէկին փոքր ինչ սրտապնդուեցին ու շունչ առան։

Քեօուօղլին նրանց նստեցրուց իւր մօտ հիւրասիրելու։

Ա.մեն կողմ խաղաղութեան ու հաշտութեան ձայներ էին հնչվում. միալն Հասան փաշալի սերքին աշխարհը գեռ երկմիտ խոռվութեան մէջ էր և մութ ու խաւար քօղով ծածկուած։ Ոչ նրա արեւը իւր լոյսն էր սփռում և ոչ էլ

պայծառ լուսինը ամպի տակից էր գուրս գալիս:

Քեօռօղլու հրամանով խոհարարները սեղան ողատրաստեցին. սեղանը բաւականին համեստ ու ճոխ էր, այնուհետև սկսուեց հացկերոլիթը:

Հաստն փաշալի բանակից աւար առած ոսկեղէն ու արձաթեղէն իրեղէնները, կարծես աչք էին շլացնում սեղանի վերայ. Քեօռօղլին կարծես դիտմամբ էր արել ալդ կարգադրութիւնը, որ իւր ասպնջական փաշալին զգացնել տալ իւր տկարութիւնն ու պարտութիւնը:

Եւրախութիւնն ընդհանրապէս լաւ էր անցկենում: Երկու հակառակ կողմերն էլ խիստ բարեկամական մտերժութեամբ էին վերաբերվում միմեանց: Բայց և այնպէս, թէւ հասան փաշան և Քեահա բէկին ալնտեղ նոտած էին իբրև սեղանակից, բայց նրանց երեսին ոչ մի ուրախութեան ժպիտ չէր նկատվում. Երկուսի էլ սրտերը հաւասար չափով վիրաւորուած ու կոտրուած էր, բոլորովին ախորժակ չունէին ուտելու, կարծես ալդ լիսուատ սեղանից նրանք մասն ու բաժին չունէին. մանաւանդ երբ մտածում էին թէ, իբրև հիւր, գերի պէտքէ գնան Չարդախլի Չամլիբէլ, ալդ վալրենիների աշխարհը, մարդկալին բորենիների իշխանութեան տակ:

Երբ սեղանը վերջացաւ, էլ կարիք չէին տեսնում ալդտեղ մնալու: Ամեն մարդ նստաւ իւր ձին. իսկ Քեօռօղլին Փերուզատ խանումին մի առանձին ընտիր նժոյզի վերայ նստեցրած, իւր հետ հաւասար գնացքով, առաջ ընկած գնում էին դէպի Չամլիբէլ:

Հազարաւոր ձիաններ բարձուած էին աւար առած իրեղններով, և ալնքան հարուստ ու առատ էր ալդ աւարը, որ կարծես թէ Փերուզատ խանումի օժիտը լինէր, որ բեռնաւորուած տանում էին նրա յետելից:

Յաղթանակող քաջերը գնում էին երգելով և ուրախ տրամադրութեամբ, իսկ լաղթուղները կոտրած սրտով:

Երբ կարաւանը ճանապարհ ընկաւ, Հասան փաշալի սիրտը մի անսովոր տիրութեամբ լցուեց: Աչքերը դարձուց դէպի հայրենիք և սրտի խորքերից մի ծանր ախ քաշելով դառնապէս մրմնչաց. —

Մնաս բարով իմ սիրելի Սիլիստրայ,  
Մնաս բարով իմ մանկութեան օրօրան,  
Տեղ չը տուիր ինձ քոյ գրկում հանգչելու,  
Սիրուհուս հետ գերի կերթամ անկուման:

Սրտի փղձուկը խեղդեց նրան ու այլ ևս չը թողեց շարունակելու, և ալդպէս յուզուած սրտով շարունակեց իւր ճանապարհը: Պէտքէ ասել, որ այս մի քանի քառով նա արտայալտեց իւր հայրենասիրութիւնը և հոգու վառ զգացմունքն ու լոեց:

Մի քանի օր շարունակ ճանապարհորդելուց յետոյ, արգէն հասան Զամլիբէլ, ուր կանգնած էր Քեօռօղլու գոռող ամրոցը, որի ճակատին ծածանում էր նուիրական գունով կանաչ գրօշակը:

Դեռ ամրոց չը մտած, Քեօռօղլին ձին կանգնեցրուց, մի ինչ որ բան մտաբերելով: Նոյն ժաման կանգ առան և քաջերը:

Քեօռօղլու սրտին խոր վէրք էր եղել, Ղըւաթի կորցրած ժամանակ, մի և նոյն տեղում, Ալվազի ասած այն հեգնական երգը, որ ասել էր. —

Նոր վաճառական ես գառել,  
Առուտուբդ շնորհաւոր:

Ալժմ որ Ղըւաթը վերադարձել էր և Փերուզատ խանումին էլ հետն ունէր, կարծես վըժժինդրութեամբ լցուած, վեր առաւ սազը ու Ալվազի ալդ հեգնական երգի դէմ երգեց հետեւել սրտագրաւ երգը. —

Հոգւոյս հատոր սիրուն Ալվազ,  
Քեզ մի սիրուն աղջիկ բերի,  
Սիլիստրայի բուրաստանից,  
Մի փունջ քնքոլշ ծաղիկ բերի:  
  
Թշնամու զօրքը գնդերով,  
Զարդ ու փշուր արի սրով,  
Նըռաթի փոխան հակերով,  
Պոհար ու մեղեսիկ բերի:  
  
Քեօռօղլին եմ ես աներկբայ,  
Միալնակ մտալ Սիլիստրայ,  
Հասան փաշին գերի առայ,  
Գլխին մեծ փոթորիկ բերի:

Երբ Քեօռօղլին երգը վերջացրուց, կարծես մի կերպ  
ապահովութիւն ստացաւ և վիրաւոր սիրտը ամոքած էր  
համարում. որովհետեւ իւր նպատակին արդէն կարողացաւ  
հասնել, մի երկու խօսքով պատասխանեց, Ալվազի իրան  
ուղղած գժուարամարս խօսքերին, որ մինչև այդ օր անմո-  
ռաց պահում էր սրտում:

Այդ միջոցին Ալվազը ձիուց վայր իջաւ և մի երկու  
քոյլ առաջ գալով, խոնարհ գլուխ տուեց Քեօռօղլուն և  
ասաց.—„Ներողամիտ եղէք, որ մի երկու խօսք ունիմ խօսելու:  
—Կարող էք, սիրելի Ալվազ, կարող էք, քաղցրութեամբ  
ասաց Քեօռօղլին:

Ալվազը շարունակեց, „Արիւ քսան ու հինգ տարի է,  
որ ես ապրում եմ, թէ նեղ և թէ լայն օրերում, ձեզ հետ.  
բայց այնուամենալիւ դեռ չի եղել մի դէպք կամ մի օր,  
որ ես համարձակուած լինիմ, մի երկու խօսք ազատ արտա-  
սանել ձեր առաջ. իսկ ալսօր—ալս ըոպէին իմ խիղճը ստի-  
պում է ինձ մի քանի խօսք ասել երգիդ առաջին երկու

տողի համար, որով մասամբ ինձ մի կերպ հասկացրիք իմ  
նշանադրութիւնը Փերուզատ խանումի հետ: Այդ իմ կար-  
ծիքով այն ժամանակ կը լինէր, երբ նախապէս սպանէիք  
Հասան փաշալին և նրա անունը ջնջէիք աշխարհից: Բայց  
քանի որ այդպէս չի եղել ու դեռ նա կենդանի է և գերի  
է ընկել Փերուզատ խանումի սիրոյ համար, ել ինչպէս կա-  
րող եմ ընդունել և չը մերժել ձեր առաջարկութիւնը, և  
ինչպէս կարող եմ յաւիտեան անբաղդացնել այդ դեռափա-  
փագ զոյգերին: Վերջապէս, չերկարացնելու համար, ասելիքս  
այն է, որ Փերուզատ խանումը իմ հարազատ քոյրն է, իսկ  
Հասան փաշան ձեր բարձրութեան եղբայրը: Այժմեանից ես  
խնդրում եմ, որ բարեհաճիք Փերուզատ խանումը դարձնել  
իւր փեսալացու Հասան փաշալին, և նրանք թող բաղդաւո-  
րուին միասին, որքան իրանք կը ցանկան“:

Նրանց այդպիսի առանձին խօսակցութեան ժամանակ,  
Հասան փաշան շրջապատուած էր զօրքերով, իսկ Քեօռօղլին  
Ալվազի հետ առաջ անցած էին խօսում:

Ալվազի լիշեալ խօսքերից Քեօռօղլին կատարելապէս  
համոզուեց: որ նրա առաջարկութիւնը աւելի ազնիւ, բարի  
ու կատարեալ է, քան իւր նպատակն ու դիտաւորութիւնը:

—Ուրեմն ինչպէս կը բարեհաճիք, կը կին ժպատով  
հարցըց Քեօռօղլին Ալվազից:

—Այ թէ ինչպէս, ասաց Ալվազը. արդէն ասացինք որ  
նրանք մեր քոյրն ու եղբայրն են. ուրեմն թող այս դէպքում  
երեւայ մեր մեծահոգութիւնն ու մարդասիրութիւնը: Քանի  
որ նրանք միմեանց վրայ նշանադրուած են, դարձեալ մի-  
մեանց տանք—հասցնենք իրանց սիրակարօտ նպատակին և մի  
շքեղ հարսանեաց հանդէս կատարելով, վերադանենք հայրե-  
նիք, որ ամեն տեղ քարոզուի ու բալորը լսեն և գիտենան, թէ  
Զամլիբէլում իսկապէս դիւցազներ են բնակվում, և թէ նրանց  
պարագլուխ կառավարիչ Քեօռօղլին յատուկդիւցազնի ծնունդէ:

Դեռ խօսքը հազիւ վերջացրած, այդ իսկ միջոցին Նիկեար խանումը լսելով Քեօռօղլու ողջ առողջ և աջող վերադարձ, մի քանի նաժիշտներով գուրս եկաւ ամրոցից, ուրախ ժպիտն երեսին գիտաւորելու իւր անզուգական հերոսին, որ այդ ժամանակ բոլոր շրջակալքի խօսակցութեան առարկան ինքն էր միայն:

Նրանք մօտեցան միմեանց և գայելչաբար սիրաշահուելուց յետոյ, գեռ երկար չէին ուզում բաժանուել միմեանցից... բայց վերջապէս Համեստ պատկառանքը տեղի տուեց պաշտելի ամօթխածութեանը և Համեստութիւնը իւր վեհութեամբ միջամտելով նրանց մէջ, վերջ դրեց այդ սիրազեղուն գրկարանունութեանը և նրանք բաժանուեցան միմեանցից:

Ելդ ժամանակ Քեօռօղլին ժպտալով ասաց.— Սիրելի Նիկեար, հետևելով Հնաւանդ պապենական սովորութեանը, իբրև ուխտաւոր, ահաւասիկ ես էլ իմ ընծան եմ բերել քեզ, որ իսկապէս Սիլիստրայի գեղեցկութեան գեղանի ու ազնիւ տիպերից մէկն է, և բանելով Փերուզատ խանումի ձեռքից՝ յանձնեց նիկեար խանումին:

Այդ հպարտ կինը առաջնորդելով Փերուզատ խանումին գէպի ապարանք, ուղղակի տարաւ նրան կանանցում յատուկ իրայ Համար յատկացրած պճնազարդ սենեակը, որ արևելեան ամեն տեսակ շռալլութիւնով զարդարուած էր, այնպէս որ այդ ճոխութիւնը տեսնողի բերանը բաց կը մնար ու աչքերը շլացած:

Այդ վայրի տեղում և աւազակների որջ կարծուած բնակարանում, այնքան ճոխ հարստութիւն, պերճանք և կարգ ու կանոն կար, որ առանց շօշափելի կերպով տեսնելու, դժուար էր հաւատալ:

Հասան փաշալին ու Քեահարէկին էլ Քեօռօղլին տարաւ իւր առանձնասեակը, որը մի նոյն ժամանակ ծառայում էր նա և սեղանատան:

Հիւրերին զարմանք պատճառեց այդ սենեակը, որովհետև այնքան թանկագին զէնքեր էին քաշ արած պատերից, որ մարդի զարմանքն էր շարժում: Եւ բացի այդքան փարթամութիւնից, որ շատերին գուցէ անհաւատալի թուի, նա և Քեօռօղլու ոտքերի տակ էլ փռել էին վագրի մորթի, իսկ պատին մխուած էր առիւծենի, որոնք հէնց Քեօռօղլին ինքն էր որսացել:

Տեղական սովորութեան, Համաձայն, նրանք նախ սուրճ վայելեցին և ապա թեթև նախաճաշիկ արին: Իսկ մի քանի ժամ յետոյ ճաշեցին ու հանգստացան:

Նոյն օրը երեկոյեան ամրոցը կրկին կենդանութիւն ստացաւ. այդ գիշեր մեծ իրարանցում ու հրավառութիւն կար: Ամե տեղ քէֆ—ըւրախութիւն էին անում: Ընդհանուր շարժումն իշեցնել էր տալիս, որ այդտեղ մի անսովոր գործողութիւն է կատարվում:

Վերջապէս Հացկէրոյթի ժամանակ Քեօռօղլին հրապարակապէս և հանդիսաւոր կերպով Հասան փաշալին յայտնեց Ալվազ խանի հետ իւր առանձին խօսակցութիւնը, և աւելացրեց որ կարող են վստահ և հաւաստի լինել, որ իրանց խօսակցութիւնից, ոչ մի կէտ բաց չի թողնուի, բոլորը լրիւ կը կատարեն:

Հասան փաշան և Քեահարէկին շնորհակալութիւն յայտնեցին այդ մասին, և հետևապէս խնդրեցին Քեօռօղլուց, որ Ալվազ խանին մօտիկից ծանօթացնէ իրանց հետ և մտերմական յարաբերութիւնները փոխադարձապէս նորոգուին:

Թէպէտ Ալվազ խանը և միւսները նստած էին սեղանի վերալ, բայց նրանք մօտիկից իսկապէս միմեանց չէին ճանաչում բացի Քեօռօղլուց:

Այդտեղ Քեօռօղլին հաճութիւն ցոյց տալով նրանց ասածին, վեր առաւ սազը և երգով ծանօթացրեց Ալվազ խանին:—

Ալվազ խանին տեսնել կամիք, պարոնալք,  
Անվեհեր է, արիասիրտ բնական,  
Յանկալի է սեղան նստել նրա հետ,  
Քաղցրաբան է, նա և ազնիւ տոհմական:

Պատերազմի դաշտում նա մի կրակ է:  
Իւր թշնամու գլխին շանթեր կարձակէ,  
Թէ զօրք թափուի հազար ու մի բանակէ,  
Կը կոտորէ աջ ու ահետք անպայման:

Նոտած իմ Ղըռաաթը դուրս կդամ հանդէս,  
Չեռս ճօճուն նիզակ, թուրս քարշ մէջքէս,  
Քեօօզլին եմ, աւանդումեմ ձեզ այսպէս,  
Քոջերիս միշտ լարգանք տուէք պնսահման:

Երգը որ վերջացրուց, նոյն ըոպէին Ալվազին և միւս  
բոլորին մի առ մի ծանօթացրեց նրանց հետ: Իրան յատուկ  
ոճով սկսեց այնքան գովաբանել նրանց, որ նրանցից իւրա-  
քանչիւրը դուրս եկան համարեա մի մի Աքելլէսներ ու թէ-  
սէսներ, որոնք մի մի իսկական դիւցազներ էին:

Այս արարողութիւնը կատարելուց յետոյ, Քեօօզլին  
դիտմամբ հրաւիրեց Հասան փաշալին իւր մեծամեծներով  
ամրոցի ներքին ու արտաքին կազմակերպութիւնը տեսնելու:  
Ինքը անձամբ առաջնորդեց նրանց գանձատունը, պատերազ-  
մական զէնքերի մթերանոցները, շտեմարանները, պահեստու-  
ները, նկուզները և հազար ու մի ծակ ու ծուկ, որոնք  
լիքն էին այլ և այլ պաշարներով:

Այս ամենը դիտմամբ արաւ. որովհետեւ քաջ ծանօթ  
լինելով տաճկական մեծաբանութեան ու սնապարծութեան  
հետ, գիտէր որ Հասան փաշան և իւրայինք, վերադարձի ժա-  
մանակ մէկը տասնապատիկ աւելուածով պիտի խօսէին ու  
հռչակէին, ոչ միայն իրանց բնակած դաւառում, այլ և

մայրաքաղաքում ևս առաւել մեծացրած պիտի հասնէր Քեօօ-  
օզլու քաջութեան ու հարստութեան համբաւը:

Մի քանի օր հանգստանալուց յետոյ, մի օր Քեօօզլին  
պատուիրեց Ալվազին, որ Հասան փաշալի հարսանիքի հա-  
մար արժանավայել պատրաստութիւններ տեսնի, շքեղու-  
թեան համար ոչինչ չը խնայէ:

Ալվազը պատուէրն ստանալուց յետոյ, ձեռնարկեց պատ-  
րաստութեան: Այլ և այլ կողմեր հրաւիրակներ ուղարկեց,  
բազմաթիւ որսորդներ արձակեց այս ու այն կողմ, նուա-  
գածուններ, ըմբիշներ, լարախաղացներ և կաքաւող հարս ու  
աղջիկներ հրաւիրեց այլ և այլ կողմերից:

Տունը փառաւորապէս կահաւորեց արևելեան ագահ շը-  
ռություննեամբ և ամենից վերջը հրաւիրեց հոգեսորական գասը,  
որ ըստ մահմետական օրինաց ամուսնական դաշն կռեն: Երբ  
ամեն բան վերջացաւ, հրաւիրեալները եկան հաւաքուեցին,  
պատրաստութիւններն անթերի իրանց տեղին կատարուեցին:  
Հարսանիքն սկսուեց, որ ըստ հնաւանդ սովորութեան տեսց  
եօթն օր եօթ գիշեր:

Հասան փաշան և իւրայինք հարսանեաց հանդէսի ժա-  
մանակ տեսան այն փառաւորութիւնը, որպիսին մինչև ալդ  
օր ոչ տեսած էին և ոչ էլ պիտի տեսնէին:

Հարսանիքը վերջանալուց յետոյ, երբ հրաւիրեալները  
ցրուեցան, երկու օրից յետ Քեօօզլին պատրաստուեց Հասան  
փաշալին Փերուզատ խանումի հետ միասին ուղեարել դէպի  
Սիլիստրալ:

Քեօօզլին ոչ միայն Հասան փաշալից աւար առածները  
ամբողջովին, այլ իւր քաջ անուանը վայել մի հարուստ ու  
շքեղ քամինք էլ վերան աւելացրած, օժիտ տուեց Փերու-  
զատ խանումին:

Բաժանման տեսարանը խիստ սրտաշարժ էր: Ալնքան  
գառնութիւններից, հալածանքներից ու կոտորածներից յետոյ

այսքան գըգուանք, սէր ու վայելչութիւն, արդարեւ շատ  
զարմանալի էր.։ Եւ այս բոլորը կատարուեց Այվազի մեծա-  
հոգութեան և Քեօռօղլու հեռատեսութեան շնորհիւ.։

Հրաժեշտի վերջին համբոյրները տալուց ու մնաս բար-  
եաւ ասելուց յետով, դեռ ևս Փերուզատ խանումը չէր ուզում  
հեռանալ Նիկեար խանումից, հարազատ քոյրերի նման պինդ  
գրկախառնուել էին միմեանց և չէին ուզում բաժանուել:

Վերջապէս զգածուած սրտերը հանգստանալուց ու դա-  
դար առնելուց յետ, մի խումբ քաջեր Ռե՛ան Արաբի առաջ-  
նորդութեամբ, նրանց անվտանգ հասցրին մինչև իրանց  
հայրենիքը—Սիլիստրալ. ուր նրանք հասանիրանց մուրազին,  
դուք էլ հասնէք ձեր մռւրազին:

— \* \* \* \* \*





PP99 508/646